


ՊԱՏՏ. ՀԻՒԿԱՅԵ

# ՈքՌԻԿ ԳՐՈՒԹՈՅ



ՊԵՏՎՐԱՏ

1 7 3 5

ՅԵՐԵՎԱՆ

S20011 - 07

899.962.10

9-68 ԹԱՆՏ. ԶԻՒԿԱԶԵ

ՄՐ

# ՓՈՔՐԻԿ ԱԳՐՈՆՈՄԸ

Վրացերենից բարգմանեց  
Ա.ԲՇԱ. ՄԵՀՐԱ.ԲՅԱ.Ն

425'80

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆԻ  
ՑԵՐԵՊԱՆ Ց 1936



17.07.2013

14083

Շատիկը նկ. Մ, Հարույրամյանի  
Խմբագրեց Հ. Պետրոսյան  
Տէլ. խմբ. Տ. Խաչվահյան  
Մրագրի Ա. Շահբազյան

Գետհատի ռպարան  
Գլավետի թաղոր-կ 1061, Պատվեր 474  
Հրատ. 3671. Տիրաժ 3000

Հանձնված և արտադրության 22 մարտի 1936 թ.  
Ստորագրված և տողելու 10 ապրիլ 1936 թ.

ПАНТ. ЧХИКВАДЗЕ  
МАЛЕНЬКИЙ АГРОНОМ  
ГИЗ ССР Армении, Эривань

## ՓՈՔՐԻԿ ԱԳՐՈՆՈՄԸ

Ցուրտ ձմռան որերն արգեն մոտենում ելին  
իրենց վախճանին։ Շուտով գյուղն ել կսկսի կեն-  
դանանալ. սկսվելու լեն գյուղացիների դաշտային  
աշխատանքները։

Ցովնամյա դպրոցի բակում լսվեց վերջին դասի  
վանգը... պարապմունքները վերջացան... դպրոցը  
դատարկվեց... բակում տիրեց լուսվթյուն...

— Պիոներ-ուազմիկներ, դեպի աշխատանք, — լըս-  
վեց ուազմիկների զեկավար Վանովի ձայնը, և անմի-  
ջապես 10—12 տարեկան տղա ու աղջիկ շարք-շարքի  
կանգնած ուղղվեցին դեպի դպրոցի պահեստը՝ աշխա-  
տանքի գործիքներ ստանալու։

Վանոն, թեև մեծ դժվարությամբ, բայց կարողա-  
ցավ փոքրիկ հողամաս ձեռք բերել՝ պիոներ-ուազմիկ-  
ների համար ցուցադրական բանջարանոց կազմա-  
կերպելու. միենույն ժամանակ նրա ջանքերի շնոր-  
հիկ և գյուղի գյուղատնտեսի աջակցությամբ վորոշ-

վեց այդ բանջարանոցում, առաջին հերթին իբրև փորձ, մշակել կուլտուրական բույսեր...

— Դե, Գիորգի, Թամար, Իրակլի, ձեզ տեսնեմ, գործի անցեք և ակոսաշարքեր պատրաստեք՝ յեգիպատացորնի սերմացվի համար:

Ապա Վանոն դառնալով խումբ-խումբ աշխատանքի պատրաստ պիոներ-ուազմիկներին՝ ասաց.

— Տղերք, դժուք ել սկսեցեք կաղամբները շիթլեւ... Դե, աշխուժ շարժվեք, ընկերներ, մի ժամվա մեջ պետք ե ամբողջ աշխատանքն ավարտենք: Ապա, ձեզ տեսնեմ...

— Յեթե այդպես անենք, վաղն այլես աշխատանք չենք ունենա, — միամիտ առարկեց փոքրիկ Գոգան, վորն առաջ բերեց ընդհանուր ծիծաղ:

— Մի վախենա, Գոգա, վաղվա համար ել աշխատանք կդանենք... — վաղաքշելով սիրալիր պատասխանեց Վանոն. — Վաղը պետք ե զբաղվենք պամիզոր շիթլեւու և ջրանցքի հետ կապված աշխատանքներով: Զաքարիայի աղբյուրից ջուրը պիտի անցկացնենք դեպի մեր բանջարանոցը:

— Ջուրն ինչներիս ե պետք, Վանո, — միամիտ հարց ե տալիս նորից փոքրիկ Գոգան ու առաջ երեսում կենսուրախ ուազմիկ-պիոներին մեջ ընդհանուր ծիծաղ ու քրքիջ...

— Բանջարանոցը պիտի ջրենք, Գոգա ջան, բանջարանոցը, — պատասխանեց Վանոն և անցավ աշխատողների շարքերը, վորպեսզի անձամբ վերահսկու լինի կատարվող աշխատանքին:

— Աշխատանքի ժամանակ ոյինբազություն չանեք և գործը չփչացնեք. թե չե, ո՛ո գիտե՞ք մեր բարկացկոտ ու ջղային գուղղատնեսին:

— Վանո, կաղամբը խորը թաղենք, թե...

— Ա՛յ, այսպես... այսքանը թաղեք հողի մեջ արթատներից վեր...

Վանոն փայտի ձողիկի վրա ցույց ե տալիս բոլորին, թե ինչ խորությամբ պիտի թաղվեն կաղամբները, բացարում ե նրանց կաղամբը շիթլեւու աշխատանքները և ուղղում յեգիպատացորնի ակոսաշարքերը....

Կենսուրախ, շարժուն ու վառվուուն պիոներները յերգ ու ծիծաղով վազվզում են դես ու դեն, քրտընքակոխ աշխատում և այդ յեռուն աշխատանքի ժամին աջ ու ձախ արագ պտտվում են ու փայլվում պիոներ-ուազմիկների ձեռքին յեղած բահերն ու գյուղատնեսական այլ գործիքները...

— Կնծիա, բեր սերմացուն, — կարգադրում ե զեկավարը և մի ակնթարթում կուլտուրական բույսերի յեղունգաչափ հատիկները շաղ են ընկնում ակոսաշարքերում:

Վանոն շարունակ հող ե լցնում սերմած ակոսներում...

Յերգ ու խաղով կատարված նրանց խմբային այս յեռուն աշխատանքի ձայները, վոգերության խինդն ու ծիծաղը, ուրախ բացականչությունները տարածվում եյին ողի մեջ, դեպի հեռուները և դեպի իրենց ձրագիրում անցնող-դարձողների ուշադրությունը,

վորոնք նախանձու չար աչքերով նայում ելին պի-  
ռներ-ուազմիկների այս յեռուն-խմբալին աշխա-  
տանքին:

— Ես ուր ես կորել այ տղա, — նկատեց զայրա-  
ցած Ալեքսին դպրոցից ուշ վերադարձած Վանոյին և  
ջղայնությունից ձեռքին բռնած կացնով զարկեց  
ծառի կոճղին այնպես, վոր կացնի կոթը փշուր-փը-  
շուր յեղագի:

Ալեքսին զբաղված եր այգու աշխատանքներով,  
բայց քանի վոր դանդաղ եր աշխատում ու ձանձ-  
րույթով, ուստի և այգում աշխատանքը հա կար ու  
կար, յերբեք չեր վերջանումը...

— Վիրաեղ պետք ել լինելի... Վանոն վախից իր  
քայլերը դանդաղեցրեց և մոտեցավ Ալեքսուն:

— Հիմա ի՞նչ դպրոցի ժամանակ ե, այ տղա.  
հրեն՝ Յեգորի տղաները կեսորին արդեն տանն ելին.  
Երբ են տուն յեկել հա... Մինչեւ հիմա ի՞նչ կարեւը  
գործեր ունելիք դպրոցում, վոր չես կարողացել ա-  
զատվել ու ժամանակին տուն գտն—զայրացած ու  
ջղայնացած խոսում եր Ալեքսին—մի կողմից աչքի  
տակով նայելով կացնի կոտրած կոթին, մյուս կողմից՝  
բարկացկոտ հայացքը չեր հեռացնում վանոյից, նրա  
այդչափ ուշանալու համար։ Ապա նորից գլուխը կա-  
խեց և սկսեց աշխատել իր կոթը կոտրած կացնով։

— Յեգորի տղաներին չեն ընդունել պիոներ կազ-  
մակերպության մեջ և չեն ել թողնում նրանց, վոր  
աշխատեն պիոներական կոլեկտիվի բանջարանոցում...  
Յես նոր վերջացրի աշխատանքներս և յեկա, այնպես

վոր իզուր ես բարկանում, — ավելացրեց Վանոն և  
քայլերն ուղղեց դեպի տուն՝ գրքերն ու պայուսակը  
տեղավորելու համար...

— Կուեկտիվ ցուցց կտամ քեզ, տես, վոր բոլո-  
րովին գուրս չերեմ գալրոցից... այ տղա, ի՞նչ բան-  
ջարանոցի ժամանակ ե ես ձմռան կեսին... ով ե  
լսել, վոր եսպես անժամանակ տնից սերմացու տա-  
նեն. մինչեւ ավետումը բա կարելի է վորեւ տնից  
սերմացու գուրս տանել...

— Մենք այսոր բանջարանոց ել ենք ցանել յե-  
գիպացորնի սերմացուն ել:

— Ա՛յ հողը գլխներիդ. բա ես սառնամանիքին  
սերմ անել կլինի. Ես ցըտին հողը սերմացու կըն-  
դունի...

— Ի՞նչ ավետում, ի՞նչ մավետում, այ ապեր, ի՞նչ  
բաների մասին ես խոսում. դրանք բոլորը հին բա-  
ներ են, — մի քիչ սիրտ առնելով պատասխանեց Վանոն  
ու նորից դարձավ դեպի Ալեքսին, — հիմա ի՞նչ ել վոր  
ցանենք, թե լավ բերք ե տալու, թե լավ վորակի յե-  
լինելու։ Վորքան շուտ ցանես, այնքան ել շուտ կը-  
հանի. դրանից ավելի լավ ի՞նչ ես ուզում...

— Լավ, ե, լավ, գլուխս մի տանի քո Սողոմոն  
իմաստունի ծակ փիլիսոփիայություններով. մարտ  
ամսին, վոր մեր պապերը, մեր նախնիները վար ու  
ցանք չեն արել, պակաս են ապրել, պակաս են ինձ-  
նից ու քեզնից լավ ապրել. նրանք սոված են կո-  
տորվել շարունակում եր իր պիոներներն Ալեքսին,  
միաժամանակ ամոթով նայում եր իր բակ ու շրջա-

պատին, ուր չիմանները պար եյին բռնել աջու ձախ  
և վոշվոք չեր մտածել նրանց քոքահան անելու մասին,  
իսկ ժամանակին վարուցանք անելու մասին հո շատ  
ել գլուխը չեր ցավացնում Ալեքսի Փարզխալաձեն...  
Գյուղում, ամեն տեղ ցանված եյին բանջարանոցները,  
իսկ նա իր բանջարանոցը ցանկապատելու մասին  
անգամ գեռ չեր ել մտածել վհչ մի նախապատրաս-  
տական աշխատանք չեր կատարել:

— Շուտ արա, ճաշդ կեր, գնանք անտառ, մի  
կապ խաչմար բերենք, այդու համար պետք ե... վոտ-  
ներդ կջարդվեյին, վոր մի փոքր շուտ դայիր տուն  
ու աշխատանքիս ոգնեյիր, —դեպի տուն գնացող  
Վանոյի յետեկից կանչեց Ալեքսին և նստեց ծառի կոճ-  
դի վրա:

— Վայ մեջքս, հոգիս դուրս յեկավ եսքան քաշ  
գալուց, եսքան աշխատելուց. ես՝ ցանցառ հիմարա-  
գլուխներն ել գլուխներս տանում են, թե մարտին  
սկսեցեք ձեր վարուցանքը... իսկ վոր սերմացուն  
հողի մեջ փոխ հվիտի դրան պատասխան տա. չե  
վոր հողը նորից սերմելու կդառնա:

Մըթմըթում եր ինքն իրեն Ալեքսին ու ծառի կոճ-  
դին նստած կամաց-կամաց անուշ ծխացրեց աջա-  
րական թունդ վորակի թութունը:

— Պրծիր, այ տղա, վերջացրու ճաշդ, մի յերկա-  
րացնի. դուրս յեկ սենյակից, —շատապեցնում եր Ալեք-  
սին դպրոցից նոր վերադարձած Վանոյին՝ անտառ  
գնալու համար. ինքն ել անհրաժեշտ գործիքները

ձեռքին՝ պատրաստ կանգնած եր անտառ գնալու հա-  
մար:

— Յես եսոր են մեր գիմացի բակի բանջարանոցն  
եմ ցանելու, —բակը գուրս գալով պատասխանեց  
Վանոն, —դրա համար ել մեր գյուղատնտեսից մի  
քանի կուլտուրական սերմացուներ վերցրի:

— Յես քեզ բանջարանոց ցույց կտամ, ձենդ կըտ-  
րի, քանի դեռ քիթդ չեմ տրորել ու կարմիր ներ-  
կել. յս քեզ բան եմ ասում, դու ինձ չես լուս ու  
քու են քննուստ գյուղատնտեսի խելքովն ես ընկել:  
Շուտ, կացինը վերցրն և առաջ ընկեր, թե չե՝ չգի-  
տեմ թե ինչ կանեմ քեզ:

— Յես քեզ ասացի, վոր աշխատանք ունեմ — յե-  
գիպտացորեն եմ ցանելու, — վճռականորեն հայտա-  
րեց Վանոն ու խրճիթից կուլտուրական սերմա-  
ցուն գուրս բերելով՝ պատրաստվեց հեռանալու:

— Արի ու ես անիրավի քիթ ու մոռթը մի ջար-  
դի:

— Ի՞նչ ես ջղայնացել, այ մարդ, ի՞նչ ե պատա-  
հել, — խոսակցությանը խառնվեց հարկանի մոտից  
նոր վերադարձած Մակրինեն:

— Ի՞նչպես թե՝ ինչու յեմ ջղայնացել. այ կնիկ,  
յես եմ ես տան մեծը, կարգադրողը, թե դա... ես սառ-  
նամանիքին ի՞նչ սերմ անելու ժամանակ ե, վոր թարս  
ձի յե նստել եղ անիրավը և վեր չի գալիս:

— Զուր ես չարանում, այ մարդ, դա իր փոքր  
տեղովն արգեն գլխի յե ընկել վոր վարուցանքի  
ժամանակ ե արդեն, իսկ դու մատը մատին չես

ուղում խփել. դու սպասում ես, վոր մայիսը դա, նոր մտածես այդ մասին... Շուրջդ չեմ նայում, աչքերդ չե՞ն տեսնում, վոր բոլորին շտապեցնում են վարուցանքը շուտ սկսել, շուտ սերմը հողին հանձնել, վոր համ բերքն առատ լինի, համ ել լավ վորակի:

— Դու ել ես զրանց խելքովն ընկել, Մակրինե. այ կոտորվեք լուք, հա, ձեր վարուցանքով, — զայրացած բացականչեց Ալեքսին ու գլուխն առավ մենակ գնաց անտառ:

\* \*

Մի փոքր հետո Վանոն, դիմացի տան բակի բանջարանոցում, վարժ հողագործի նման, աջ ու ձախ եր շարժում փայփլող բահը, նա արդեն սկսել եր իր սերմ անելու աշխատանքը ցուցադրական բանջարանոցում և գյուղատնտեսական անհրաժեշտ պահանջների համապատասխան շարք-շարք ածուներում կանոնավոր կերպով տեղալորում եր սերմացուն:

Հատ աշխատեց Ալեքսին յետ կանգնեցնել Վանովին իր մտադրությունից, հազար թուք ու մուր թափեց վրան, դիմեց նաև համոզելու փորձին, թե սերմացուն կիշանա, կփտի, յեթե ժամանակից շուտ հողին հանձնմի, բայց վոչինչ դուրս չեկավ. Վանոն արդեն վաղուց աշխատանքի յեր անցել, համաձայն գյուղատնտեսի ցուցմունքների, և պիտներ-կոլեկտիվի ցուցադրական բանջարանոցում վաղուց արդեն ավարտել եր սերմանման աշխատանքները...

Հասակակից ընկերների ոգնությամբ դիմացի

բակի հողամասը միացրեց Ստեփանեցի անմշակ հողամասին, և մի քանի հասակավոր պիոներներ ընկերովի մշակեցին այդ հողը:

Վանոն ալստեղ ել գլխավորում եր գործը և ղեկավարում աշխատանքները:

Ալեքսին շատ խոսեց վորդու հետ, բարկացավ, անիծեց, բայց վոչինչ չոգնեց, սպառնաց մինչև խսկ, թե իմ պապենական հողի վրա վհձ մի գնով թույլ չեմ տառարներին՝ իրենց ուղածն անելու. սակայն ամենինչ զուր անցավ. Վանոն իր ուղածն արավ, և ժամանակից շուտ վարուցանքի յենթարկված կոլեկտիվի հողամասի վրա արդեն ծածանվում եյին լեզիպտացորնի սիրուն ծիւերը:

Ալեքսու մատնանշած «ավետումն» անցավ, նրայետեկից գլորվեց նաև «պարտահատուցման» շաբաթը. բայց նրա նախագուշակած սառնամանիքն ու խիստ ձյուները մեջտեղ չեկան, չարդարացան Ալեքսու յենթագրությունները, ընդհակառակը՝ զարմանալի արեսույեղանակներ յեղան գարնան նախորեցին... Փչող տաք քամիների հետևանքով մինչև խսկ գետնի յերեսն սկսեց ճաքճքել և հողի մեջ բահն ու խոփն այլև գործ չելին կարողանում տեսնել:

Խիստ մտատանջության մեջ ընկավ Ալեքսին. շվարձ եր մնացել աիրող յեղանակների հանդեպ. Ապրիլ ամիսն արդեն մոտենում եր իր վախճանին, սակայն վար ու ցանք սկսել նա դեռ չեր կարողացել... Ամեն անդամ չորացած-ճաքճքած հողին բահը դիպցնելին՝ կոթն եր կոտրվում, բան չեր կարողանում անել...

Ծանը մտքեր պաշարեցին նրան.. մտածում եր,

մտածում և յելք չեր գտնում այս դրությունից  
դուրս գալու...

— Ի՞նչ ե, այ որհնված, չլինի սովի առաջն ես  
կանգնեցնում մեզ, վոր ես ծանը որերին մի կաթիւ  
անձրւ անգամ խնայում ես մեղնից: Յերաշտ...  
բայց այսքան յերկարատեւ,—մտածում եր Ալեքսին ու  
նախանձու հայացքով նայում պիտների վար ու  
ցանքին:

Դեռ մայիսը չեր հասել յերբ արդեն պիտներա-  
կան կոլեկտիվի արտը ծովի ալիքների նման ծփում  
եր թեթև զեխյուրից անգամ...

— Տես ինչպես ես փոքրիկ յերեխաներն իրենց  
մանկական խելքով հաղթեցին ինձ, ե՛,—դառնությամբ  
խոստովանվում եր Ալեքսին և ապշաճ նայում կոլեկ-  
տիվի կանաչած փարթամ արտերին: Քառասուն տարի  
յե՛, վողջ կյանքս մաշել եմ ես հողը քանդելիս. բառ  
հելուց ու ցանելուց բացի, ուրիշ վոչինչ չեմ սովորել  
եսքան ամարիների ընթացքում. բայց արի տես, վոր  
ինձ նման անկիրթ ու տգետ մարդու բահելն ու ցա-  
նելն ել պետք չի գալիս ես անիրավ հողին. մենք յետ  
ենք մնացել... Բա յես վոր տգետ ու հիմար չլինելի,  
ժամերով կկանգնելի ու կվիճելի ընտանիքիս կամ  
վորդու հետ, ինչ-վոր «ավետումի» ու «պարտա-  
հատուցման» շաբաթի մասին. բա սա հիմարություն  
չե՞. ավելի լավ չե՞լ լինի՝ լսելի իմ փոքրիկին և իր  
ժամանակին սերմացուն հողին հանձնելի, հիմա հո-  
ես դժբախտ որին չելի լինի կանգնած: Իմ համա-  
ռությամբ վնասեցի և՛ ինձ, և՛ իմ ընտանիքին... Յես

ի՞նչ իրավունք ունեյի ընտանիքս սովի դռանը կանգ-  
նեցնելու...

Ալեքսին ախուր ու մտազրաղ նստեց քարին և  
դառն մտածմունքների մեջ ընկալի...

Փողոցից լսվեց մանուկների կենսուրախ ձիչն ու  
աղաղակը. նրանք դժվարոցով դպրոցից վերադառ-  
նում եցին տուն...

Վանոն ել դպրոցից վերադարձավ տուն, նա  
արտասովոր ուրախ արամագրության մեջ եր:

— Ա'պի ջան,—գալուն սկս՝ վանոն դիմեց իր  
հորը, վորը մտածմունքների մեջ ընկած նոտած  
եր քարին.—Վաղը բանալու յենք մեր արտերը  
ջրող առուն... մի ամբողջ գիշեր ել մեր հողամասերն  
ե ջրելու այդ առուն. Ին ժամանակ կաշխատենք ցա-  
նել իհարկե...

Ալեքսին աչքերը չուծ ու զարմացած նայում եր  
վանոյին և իր ականջներին չեր հավատում, վոր լսած-  
ները ձշմարիս են...

— Ի՞նչ ես ասում, զավակս,—հուզված հարցրեց  
Ալեքսին և սրտատրով սպասում եր պատասխանին:

— Ա'պի ջան, ասացի վոր մի գիշեր չառուն բաց.  
Են թողնելու գեալի մեր արտերը. իսկ մեր հողամա-  
սերի վոռոզման համար մի գիշեր ել բավական ե...

— Բայց, իհարկե,—խոսքը յերկարացնելով շարու-  
նակեց վանոն, շեշտակի նայելով հոր աչքերին,—  
շատ մոտ ապագայում անշուշտ մեր բոլոր հողերը  
կհանձնենք կոլեկտիվին—կոլեկտիվ կմտնենք...

— Կոլեկտիվին...

— Այս, ապի ջան, կոլեկտիվին. կոլեկտիվորեն, հոտեսամբ, թե ի՞նչպիսի բանջարանոց ու արտեր մշակեցինք ընդհանուր ուժեղութ. ապագայում հասակավորներդ եւ ձեր փորձով ու խորհուրդներով, ոգնության պիտի գաք մեզ...

— Կոլեկտիվում,—ծոր տվեց Ալեքսին, և վերջին վանկը հանգավ նրա շրթունքներին. նորից ընկավ խորը մտածմունքների մեջ...

— Գալիս եմ... յես կոլեկտիվի կողմնակից եմ. թե կուզ հենց այս տարվանից... իսկ դու, սիրելիս, անպայման ազրոնոմ պիտի դառնասու, — ավելացրեց Ալեքսին և դեմքին մի տեսակ կարմրություն զգաց, յերբ հիշեց այն անախորժ տեսարանը, վոր ունեցել եր վորդու հետ շաբաթներ առաջ: Ալեքսին համոզվեց, վոր ինքը սիսակ ե յեղել և վորոշեց—«քանի վոր գյուղի տնտեսության համար նույնպես անհրաժեշտ են գիտությամբ զինված, բանիմաց ու փորձված մարդիկ... վանոյին ել անպայման ազրոնոմ պիտի դարձնեմ»:



## ՎԱՂԸ ՓԵՏՏՐՎԱՐԻ 25-Ն Ե

Գյուղերը ճերմակ յափնջի ելին հագել: Արմավենու չորացած հատիկների շուրջը ճթճթում եյին թռչունները:

— Ծրիիպ—լսվում եր ճայակերպ թռչունի ծղըրտոցը, ճուղից ճյուղ վոստոստում ելին չաղլիկ կեռնեխները:

Հեռվից խուլ կերպով լսվում ելին վորսորդական հրացանների ձայներ. 12-13 տարեկան յերեխաներ, խմբված ծառերի մոտ, հետևում եյին այս ու այնտեղ վոստոսող թռչուններին:

— Իմ հրացանը լավ տեսակի յե. հին սիստեմի:

— Իմն ավելի լավ ե:

— Իմս իսկական յենարալկա յե—: ծառերի մոտ խմբված պատանի, վորսորդներից ամեն մեկն աշխատում եր զովել իր հրացանը՝ և ուշադրությամբ նայում ելին թռչունների հետքերին:

Հենց այդ վայրկանին մի մեծ թռչուն յեկալ ու

Նստեց ծառի ճյուղին. Վանոն խկուէն հարմարեցրեց.  
գետնին փովլեց ու նշան առավ:

Նույն որինակին հետեւց Բիձինան:

Վերջինից ել որինակ վերցրեց Շոթան...

Այսպես յերեք վորսորդներ իրենց հրացաններն  
ուղղեցին գեակի այդ թռչունը:

— Ճակ...

Թռչունը ցած ընկավ և կիսակենդան փովեց ըս-  
պիտակ ճյան վրա:

Ճշմարյատ վոր Վանոյի հրացանը լավ տեսակի յի-  
տհագին հեռավորության վրայից թռչունին վայր  
ձգեց գետին:

— Ի՞նչ ես գու ել ավելրբդավելորդ խոսում. իմ  
հրացանը չե՞ր կարող նույն թռչունին գետին զլորել  
վոր Վանովին ես գովիճամ: Ես հրացանով՝ հայրս ան-  
ցյալ տարի արջ և սպանել. թռչունն ի՞նչ ե; վոր չկա-  
րողանար վայր գլորել:

— Եսքան հեռավորության վրա, իհարկե, չեր կա-  
րող:

— Դե վոր եղանես ե, արի գրազ գանք:

— Գրազ գանք...

— Տղաներ, չմոռանաք, եսոր պիոներուազմիկնե-  
րի ընդհանուր ժողով ե,— ճախ տվեց վորսորդ պա-  
տահներին դեպի գլուղխորհրդի գրասենյակ գնացող  
Գարոն և Զարունակեց իր ճանապարհը:

Վորսորդները գլուխները քորեցին...

— Տղերք, եսոր որակարգի մեջ դրված և Գարո-

յի գեկուցումը փետրվարի 25-ի նշանակության մասին:

— Յեթե այդպես ե, գնանք. ինչու յենք ուշանում...

— Հրացանները:

— Հետներու վերցնենք:

— Ի՞նչպես կարելի յե հրացաններով գնալ պիո-  
ներուազմիկների ժողովի:

— Յեթե այդպես ե, բոլորս դեպի մեր տները,  
ապա հավաքվենք դպրոցի բակում:

— Վանո, Վանո, տես ի՞նչ լավ թռչուն և նստել  
դիմացի ծառին:

Դու ել ժամանակ գտար, ի՞նչ թռչուն, ի՞նչ բան, ախը  
կարող ենք ուշանալ...

— Լավ, իսկ յեթե Գարոն չանցներ մեր կողմը և  
մեղ չպատահե՞ր:

— Գարոն. ասենք թե Գարոն չանցներ, բա յես  
գիտեցի՞ վոր եսոր ժողով կար...

— Իհարկե գիտեյինք, բայց չեյինք հիշում...

— Իսկե ել չե... շատ լավ հիշում եյի, — շարու-  
նակում եր պնդել Վանոն և աչքի տակով նայում եր  
ծառի ճյուղին նստած թռչունին...

— Գնանք տուն...

— Գնանք... ասացին ընկերները և ճյունոտ ճա-  
նապարհով քայլերն ուղղեցին դեպի իրենց տներ...

\* \*

Դպրոցի ընդարձակ բակը լցված է պիոներներով...

Ուրախ խինդ ու ծիծաղ տիրում ե ամեն տեղ, պատշշ-  
գամբից զուռնայի ճախ ե լսվում. պար են գալիս,  
ուրախանում են: Մի խումբ պիոներներ ել դպրոցի  
բակի մի անկյունում սկսեցին իրենց խմբային յերգը:

17

Հինգվեց պիտներ զպրոցական սեղանի շուրջը  
լամբած՝ շտապեցնում են միմյանց:

Գրում—պատրաստում են ավուր-պատշաճ պլա-  
կատներ...

- Պատրաստ եւ;
- Վերջացրինք:
- Վանի, սոսինձ բեր՝ փակցնենք:
- Վարեղից ճարեմ սոսինձ:
- Վորտեղից ուղում ես՝ ճարիր, շուտ, հարկա-  
դոր եւ:
- Մեխով կարելի յե փակցնել:
- Մեխ վհրաեղից գտնենք:
- Տնից կբերեմ...

Դուն մեջ յերևաց զեկավար Գաբոն, նա ինչպես  
միշտ, այս անգամ ել ուրախ տըամադրության մեջ եւ  
Պիռներները լուռմ են:

— Նոտեք, բարեկամներ,— դիմում ե Գաբոն  
պիռներներին և մեկ-մեկ նայում բոլորին:  
Գաբոն նույնպես նստում ե...

Գրալանից հանում ե տեսրակը...

- Բարեկամներ,— լուռեթյունն ընդհատեց Գաբոն  
և բացեց տեսրակը.— այսոր ուղում եմ զրուց բա-  
նալ ձեզ հետ, թէ ինչպես խորհրդայնացավ Վրաս-  
տանը: Ինչպես զիտեք, վաղը լրանում ե տասը տարին  
այն որվանից, երբ մեղսում հաստատվեց բանվորա-  
գյուղացիական իշխանություն: Ինչպես հայտնի յե  
ձեզ պիռներ-շարժման պատմությունից, մինչև խոր-

հրդային իշխանության հաստատվելը մեղսում վոչ  
մի կազմակերպություն գոյություն չուներ աճող  
սերնդի արտադրոցական կրթության և բանվորա-  
կան շարժման ուսումնասիրության համար:

Այն ժամանակվա աճող սերունդը, նրանց թվում  
նաև լեռ, լեռիտասարդությանը զինելու և հեղափո-  
խական կրիմսների համար նախապատրաստելու գործը  
հարկադրված ելինք տանել ընդհատակյա աշխատանք-  
ների միջոցով, շատ հաճախ ծնողների կամքին հա-  
կառակ:

Այսոր, լեթե դուք ազատ կերպով մտնում եք  
պիռներ-ուազմիկների շարքերը, ամեն կերպ աջակ-  
ցում են ձեզ. մինչդեռ սրանից տասը տարի տուաջ  
ձեր հասակում գտնված պատանիկները մերկ ու բո-  
րիկ եյին և շատ անգամ սոված ու տանջված՝ տաս-  
նյակ կիրմետը ճանապարհ ելին կտրում խավար զի-  
շերներին—անկեզալ-գաղտնի ժողովին մասնակցե-  
լու համար:

Ալսպես եր այն ժամանակ աճող սերնդի վիճակը:

Գաբոն թերթեց իր տեսրակը և պիռներ-ուազ-  
միկներին կարդաց անցյալ հուշերից մի քանի նմուշ-  
ներ:

\*  
\* \*

Փետրվար ամիսն եր: Ամբողջ Գուրիան վոտքի  
վրա լեր և սարսափով կանգնած պատերազմի սև ուր-  
գականի առաջ:

Ցերեկն ու գիշերը հաջորդում եյին իրար և ամեն

ցերեկ ու գիշեր տեղի ելին ունենում նորանոր խըմբերի զորակոչներ, զորահավաքներ: Դեպի զորաշարքերն ելին քաշում «հայրենիքը» պաշտպանելու համար մինչև յերեսուն տարեկան հասակ ունեցողներին: Ապա քառասուն տարեկաններին:

Մի քիչ ուշ՝ գործը հասակ նաև 60 տարեկաններին:

Իսկ վերջում (այս բոլորը պատահեց ընդամենը մի ամսվա ընթացքում)

— Դուրս յեկեք բոլորդ, — առաջարկվում եր Գուրիակի գյուղացիությանը, և ժողովրդի մեջ որեցոր աճում եր գժողությունն ու անբավականությունը:

Այսպիսով նրանք գյուղերում նստած, հայուղում-անվանարկում ելին բոլէիներին:

Բամբասում... սուս-սուտ լուրեր տարածում նըրանց մասին...

Նախագուշակում ելին, վոր՝

— Բոլէիները, վորպես թե, նենց վոր կգան, անմիջապես վերջ կտրվի վրաց ժողովրդի զոյությանը, վրացիները կվերանան, կվերանա. նաև վրացական կուտուրան, լեզուն, ամոթն ու նամուսը...

Ահա այսպես, ազգային ներկայացուցիչները, կոմիտեների ներկայացուցիչներից սկսած մինչև շտարի անդամները, վոտքից մինչև գլուխ զինված՝ շրջում ելին գյուղերում, քարոզում ժողովրդին լուրատեսակ սուերով և սարսափի տակ ելին պահում աշխատող-տղամարդ ձեռքերից զուրկ անողնական մնացած ընտանիքներին, և, վորպես թե գասալիքների վորո-

նումների պատրվակով, գյուղերն ավերում, իրենց առվորական զինված խմբերի այցելություններով և խուզարկություններով՝ սարսափի տակ ելին պահում գյուղական ազգաբնակչությունը:

Այս ժամանակ լես աշխատում ելի ընդհատակյա կոմյերիտական կազմակերպության մեջ՝ ասում ե Գարոն և թերթում իր տետրակը. — մեր կոմիտեի անդամների մեծ մասը բանտարկված ելին մենշևիկների կողմից, և ամբողջ գործի ծանրությունը մնացել եր մի քանի ընկերների վրա միայն, վորոնց թվում ելի նաև յես: Կուսկոմիտեի հանձնարարությամբ, մենք պիտի տեղեկություններ հասցնելինք Ողուրգեթ՝ շրջանում տարվող աշխատանքների մասին.

Ճանապարհներին զիշեր ու ցերեկ վլստում ելին զինված պահակներ, թղթերի ու գրությունների փոխադրումը դժվար եր ու վտանգավոր. իսկ գործը ըսպասել չեր կարող, դանդաղել անկարելի յեր:

Արդեն Սուրամի մոտ ֆրոնտ եր կազմված:

Իսկ գյուղերում...

Անկեղալ գործունեյություն տանող բոլշևիկները ծրագիր ելին կազմում իշխանությունն իրենց ձեռքն առնելու համար...

Կոմիտեի նիստերի արձանագրությունները և շրջանացին աշխատանքների մասին լեզած նոր տեղեկություններն անհրաժեշտարար պետք եր շատ շուտ Ողուրգեթ հասցնել:

Յերեք կոմյերիտական ելինք մնացել չար աչքեցից աննկատ... ուրեմն և չձերբակալված...

Վիճակ ձգեցինք:  
 Ողուրգեթ գնալն ինձ վիճակվեց...  
 Ուրախացա...  
 Թեկ' մի փոքր ել վախեցա...  
 Կեսորվա ժամը էերեքն եր, վոր ճանապարհ ընկա...  
 Ես են ժամանակ սովորում եյի դիմնաղիալում, և  
 մեր տունն ել շատ մոտ եր այդ դիմնաղիային...  
 Մեր տանը վոչինչ չասացի այս մասին...  
 Ներսից, շորերի տակ, գաղանի տեղերում անհրա-  
 ժեշտ թղթերն ու գրությունները պնդացրի և տրեխ-  
 ներս հաղին՝ ոլացա զեպի Ռուրդեթ...  
 Զյունը թափում ե փաթիլ-փաթիլ...  
 Մերթ ընդ մերթ փշում ե նաև սառը քամի...  
 Ճանապարհս բավական էերկարում եր և դժվա-  
 րանում եր.  
 Գնում եմ... բայց...  
 Արգեն հոդնել ելի...  
 Սոված ելի, ուսել ելի ուզում...  
 Դեմ առա մի բավական յերկար նասակիրալու  
 վերելքին...  
 Մասախուղ եր պատել ամենուրեք...  
 Արդեն մթնում ե ...  
 Մթնում ե. և իս աշխատում եմ վորքան կարելի  
 յե քայլերս արագացնել վորպեսզի լուսով տեղ հաս-  
 նեմ...  
 Զյունը մինչև ճնկներս ե հասնում, սակայն վա-  
 խենալով մթնելուց, վերջին եներգիան հավաքած  
 շտապում եմ առաջ...

Անդա նասակիրալու բարձունքը:  
 Թեյի պղանտացիաների մոտ հանդիպեց մի կառք:  
 Նայում եմ՝ կառքի մեջ նստած են գվարդիայի  
 շտարի պետը և մի անձանոթ մարդ, վորոնք շտա-  
 պում են հասնել Զոխատառը:  
 Կառքի կողքին՝ կառավանի կողքին ցցված են դա-  
 րաբինաները\*) ձեռքին յերկու գվարդիականներ...  
 Ուշադրությունները կենարոնացը ինձ վրա:  
 Յես գլուխս կախ շտապում եմ առաջ և ուրախա-  
 նում եմ, վոր սրանից հետո ճանապարհս ավելի հեշտ  
 կլինի, քանի վոր կերթամ կտոքի հետքերով, ձյան  
 միջով նրա հարթած ճանապարհով:  
 — Ո՞վ ես, այ տղա, մւր ես գնում, — լսվեց մի  
 ձայն կառքի միջից:  
 — Յես... ողուրգեթցի լեմ...  
 — Բա ես կողմերում ինչ ես շինում, մ լա-  
 կոտ...  
 Շտարի պետը հրամայեց կառքը կանգնեցներ  
 — Խուզարկեցեք:  
 — Ո՞ւմ մոտ ելիր գնացել. Ինչ գործ ունեմիր  
 այս կողմերում.  
 — Քեռուս մոտ եյի, — ստեցի և անհարմար զգալով  
 յերեսս շուռ տվի, վորպեսզի աննկատելի դառնամ  
 իմ ծանոթ գվարդիականներից մեկին, վորը, ինչպես  
 յերեսում ե, չեր հիշում ինձ:

\*) Կարճ հրացան+ Ծան. թրդմ.

— Զեռքդ բարձրացրու:

Զեռքես բարձրացրի, բայց վախենում եմի, վայ  
թե հանկարծ մի բան գտնեն մոտա:  
Խուզարկեցին վոտքից-զլուխ:  
Վոչինչ չգտան:

Ազատված այդ վտանգավոր հանդիպումից՝ այն-  
պես ոլացա Նասակիրալու վայրեջքից դեպի ցած...  
վոր այլև, թվում եր ինձ, թե հրացանի դնդակը  
անդամ չեր կարող հասնել:  
Մութն ընկապ...

Հազիվ մի փոքր ճանապարհ եմի կարել վոր գի-  
շերն իջավ. մութն ե, բայց ձյան լույսն ուղի չե-  
նշում առաջն, ինքս ել բոլորովին թրջված ու հոգ-  
նած՝ ձյունած ճանապարհով շտապում եմ առաջ...

Ոգուրչեթ առաջ ել եմ յեղել համարյա նույն տե-  
սակի հանձնարարությամբ, այնպես վոր ինձ համար  
պարզ ե արդեն, թե վորքան ճանապարհ ե մնացել:  
Յերեք կիլոմետր ճանապարհ դեռ ունեմ անցնելու:  
Այսինչ ծնկներս կարծես չեն ուզում այլքս հնագանդ-  
վել ինձ. շունչս կտրվում ե. քաղցածությունս ծա-  
րավի փոխվեց և սկսեցի ձյան կույտեր հալեցնել  
բերանիս մեջ՝ ծարավս հագեցնելու համար: Բուզս  
չորացել եր:

Նստեցի ձան մեջ...

Այլքս չեմ կարող առաջ անցնել:  
Գիշեր ե, թեև ցուրտ ու սառնամանիք, բայց այս-  
տեղ, ճանապարհին կարող եմ ազատ քնել, մանա-  
վանդ վոր հոգնած եմ և քունս ել տանում ե.

Ո՛, վորքան դժվար է հոգնածությունը:

Իմ վողջ կյանքում, թեև գեռես կարճատե, կար-  
ծես տուաջին անգամ զգացի այսպիսի ծանր հոգնա-  
ծություն: Մի քիչ ուժ տվի ինձ...

Վերկացա...

Վեր եմ կացել վորքի կանգնել, բայց թեթև  
հանգստացածի նման, սրունքներս ալիս չեն հնա-  
գանգվում...

Ծանը վիրավորի նման ծնկներս ծալվել են, ու-  
ղիղ կանգնել չեմ կարողանում: Վախեցա...

Վախը մի փոքր զգաստացրեց ինձ, թեև մեծ դժ-  
վարությամբ, բայց մի քայլ արի:

Մի քիչ առաջ գնամ, միենանույն ե՝ քնելու յեմ,  
քունս խիստ տանում ե:

Հարրածի նման այս ու այն կողմն եմ ընկնում:

Նկատում եմ՝ աչքերս ել դավաճանում են ինձ,  
այլիս չեմ կարողանում հասկանալ, թե ուր եմ գնում,  
վոր կողմն եմ շարժվում:

Զյունը քանի գնում սաստկանում ե:

Վորտեղ վոր ե՝ ճանապարհն այլիս չի յերեա...

Ուզում եմ գոռալ, ոգնություն կանչել սակայն  
ամաչում եմ, վախ ել կա սրտումս:

Վոտքից մինչև գլուխ թրջված եմ, շորերս բոլո-  
րովին թաց:

Վախենում եմ, վոր կարեսը թղթերն ել թաց լի-  
նեն և վրայի գրությունները չնջվեն:

Հանկարծ՝ մի փոքրիկ խրճիթ, միջից աղոտ ճրա-  
գի լույս:

Կանդ առա: Մտածում եմ՝ մտնեմ այդ խրձիթը  
և գիշերը անցկացնեմ այլտեղ: Վայ թե կասկածեն,  
բայց ինչ պիտի կասկածեն.... լավ է, գնամ ու հան-  
գըստանամ այնտեղ...

Մոտեցա, դուռը թակեցի:

Շան հաջոցի հետ մեկտեղ լսվեց ներսից մի ձայն.  
— Ո՞վ ես:

— Ճամբորդ եմ, հոգնած, — պատասխանեցի:

— Ներս արի, ճամբորդ ախտեր, — լսվեց մախ-  
մուրի նման փափուկ ձայն:

Սրտից կարծես ծանր քար ընկավ. սրտապնդվե-  
ցի:

Վերջին ուժերս հավաքեցի և հետեցի հյուրըն-  
կալիս. մտա բակը:

Վրայիս ձյունը թափ տվի:

Հյուրընկալի խրձիթից իմ հասակի յերիտասարդ  
մի աղջիկ դուրս բերեց ալելը և սկսեց շորերս մաք-  
րել ձյունից:

Ինձ առաջնորդեցին գեղի խրձիթ:

Թաց բաշլըտս կախ տվի սյունից, վոր չորանա:

Տրեխներս հանեցի և ոջախի կրակին կարու-  
մուեցա կրակին տաքանալու:

— Պղրտեղացի յես, ախտեր:

— Բուկարելցի:

— Ո՞ւր ես զնում եսպես անժամանակ:

— Ողուրգեթ եմ գնում, քեռուս մոտ, հանկարծ  
ճամբես դժվարացավ և գիշերը վրա հասավ:

— Շատ լավ, բայց ով ե յեղել քեզ ուղարկողը,

վոր այսպիսի սառնամանիքին հարկադրել ե քեզ եղ-  
քան յերկար ճանապարհ կտրել:

— Տանը յեզիստացորեն չունեյինք. ալյուր չը-  
կար. ինչ պիտի անեյինք, ուրիշ ճար չկար...

— Լավ բայց միթե քեզնից ավելի հասակա-  
վորը չկար ձեր տանը:

— Ինչ ու չե, կային, բայց բոլորին պատերազմ  
են տարել:

— Հեյ գիտի, հա, ինչ ցավ ու պատիժ դառավ  
ես պատերազմը մեր գլխին:

Ծանը ախ քաշեց հյուրընկալս:

— Վայ, խեղճ տղա, — բացականչեց ոջախի մոտ  
կուչ յեկած հյուրընկալի կինը՝ Մարինեն, ու աչ-  
քերը լցվեցին արցունքով:

— Մարինե, յերիտասարդը սոված կլինի, ճամ-  
բորդ յեկած ե՝ մի բան պատրաստի, թող ուտի ու  
հանգստանա:

Յերը կերակրի անունը լսեցի, քաղցածությունս  
ավելի զգալի զարձավ... Շատ չանցավ, իսկույն ա-  
ռաջս սփոռց փուցին, գարսեցին՝ ինչ կարող եր  
ճարպել աղքատիկ խրձիթում, և յես շատ լավ հի-  
շում եմ, թե ինչպես ամաչելով, բայց ագահաբար  
կուլ եյի տալիս պատառները, վորովհետև իրոք վոր  
իխստ սոված եյի:

\* \*

Յերկրորդ որը առավոտը շատ շուտ զարթնեցի:  
Մարինեն արգեն վոտքի վրա յեր և տակարի յետեից  
եր ընկել գոմը մաքըում եր...

Զյունը դադարել եր:

Յեղանակը կարծես լավանալու նշաններ եր ցույց  
տալիս:

Շորերս հագա և առանց լվացվելու պատրաստվեցի ճանապարհ ընկնելու:

Հյուրընկալիս դուք չեկավ իմ այս վարժունքը և  
դարձավ ինձ.

— Բա տեսնված բան ե՞, զավակս, վոր ճամբորդը  
տնից դուրս գա առանց մի բան նախաճաշելու. ի՞նչ  
անենք, վոր աղքատ ենք, միթե կարելի յե քեզ  
այդպես ճամբել. նստիր, խնդրեմ, նախաճաշ, անենք,  
ապա գնա քո ճամբան:

Յես ամաչելով նստած եյի վառած ոջախի մոտ,  
դլուխս կախս, և մտածում եյի առաջիկա ճամբորդու-  
թյանս մասին:

— Զավակս, ձեր գյուղում ըռնավոր կա վորեե  
մեկը, — ցածր ձայնով հետաքրքրված հարցրեց հյուր-  
ընկալս նախաճաշի ժամանակ:

— Ի՞նչպես չե, ինչ-վոր մարդիկ ձերբակալեցին  
վերջերս, բայց...

— Ի՞նչ մարդիկ են եղ ձերբակալվածները:

— Ասում են՝ ինչ-վոր ըուշեիկներ են, — դիմ-  
մամբ ծոր տվի խոսքերս:

— Հեյ գիտի, արդարություն, ժւր ես կորել:

Հյուրընկալս մտածմունքների մեջ ընկափ. նրա  
խորը և ծանր ախ քաշելուց նկատելի յեր, վոր մի  
ինչ-վոր վիշտ ունի:

Լոռություն ընկափ...

— Ներեցեք, — ընդհատեցի լոռությունը՝ գլուխա-  
մի փոքր բարձրացնելով. զինին մի փոքր հա-  
մարձակություն եր տվել ինձ. — ձեր հյուրասիրու-  
թյունն անմոռանալի պիտի մնա ինձ համար, և յես  
այնուամենայնիվ ուղղում եմ իմանալ, թե ով ե իմ  
հյուրընկալը...

Հյուրընկալս նորից խորունկ ախ քաշեց:

— Ի՞նչո՞ւ յես հետաքրքրվում, զավակս, ով ու-  
ղում ե՝ լինեմ, միենույնը չի. իմ վողջ կյանքը մի-  
այն և միայն տանջանքների մեջ ե անցել. Անունս՝  
Թեոփիլ ե. աղքս՝ Երքոմայիշվիլի:

Ե՞ն, իզուր դարդերս նորոգվում են. մի հատիկ,  
մինուճար զավակ ունեյի...

Թեոփիլեն այստեղ խոսքն ընդհատեց, մատներով  
սկսեց խաղալ միբուքի ալեհեր մաղերի հետ:

Նրա աշքերին նկատեցի արցունքներ. մի փոքր  
հետո չուխի ծայրով սրբում եր իր արցունքուտ աշքերը:

— Իմ աշքի լույս, ջան ու կրակ տղաս... վայ,  
ազիզ տղաս, աչքերս կուրանային թող, վոր քեզ եդ  
որին չտեսնեյի...

Ամբողջ մարմնովս դող անցավ. անհարմար եյի  
զգում ինձ:

— Ի՞նչ պատահեց տղայիդ, — վերջապես սրտա-  
պընդվեցի և հարցրի հյուրընկալիս:

— Բանտում... բանտում սպանեցին, զավակս, ես  
անիբավկերը...

Յես իրը միմիթարանքի նշան՝ գլուխս կախեցի...

— Նա իմ տան, իմ ոջախի հույսն ու տպավենն

Եր, իմ միակ նեցուկը, և սրանք, ես ավաղակշղաշաղները սպանեցին նրան, ու ծերտությանս որերն այսպիս դառնացրին...

Թեռփիլեն իր վիշտն ու հուզմունքը մեռցնելու համար՝ մոտեցավ ոջախի մեջ վառվող կրակին և ըսկըսեց ծխացող վայտը շուռ ու մուռ տալ:

Ես այլև վոչինչ չհամարձակվեցի ասել, թեև համոզված եյի հյուրընկալիս՝ վշտի ու տանջանքի անկեղծության մեջ:

Բանտում կորած փորդու նկարը ցույց տվին: Խմբանկարի մեջ նշամարվում եր նրա պայծառ ու կենսուրախ դեմքը...

— Յերկի ընդհանրապես թույլ կազմվածք եռւնեցել:

— Ե՞՞ ե՞-իս, զավակս, կոփվ ե ես մերկանքը, կոփվ, և այդ կոփի մեջ ով ե իմանում, թե մեզնից ով փորտեղ ե մեռնելու...

Թեռփիլեն նորից ծանր ախ քաշեց ու գլուխը կախեց:

Իսկ Մարինեն դառնացած նայում եր անմուռապ փորդու պատկերին և շարունակում եր աղի արցունք-ներ թափել աչքերից...

— Սև հագուստ անգամ չկարողացա զանել, վոր հագնեյի և գոնե դրանով մի փոքը սիրտս մեղմեյի. վայ, ցավո տանի թշվառ մերդ, փորդի...

Այս բոլորից հետո շուտ ավարտեցինք նախաճաշը, և յես շնորհակալություն հայտնելով իմ հյուրընկալ-ներին՝ շտապ քայլերով ճանապարհ ընկա:

Առավոտյան ժամը 10-ին արդեն յես գտնվում եյի նշանակված տեղում... Հասել եյի պայմանական տեղը... Զյան տակ կորած գյուղերն ինձ անծանոթ թվացին... Ուշագրությամբ գննում եյի տների ըրակերը: Ոգուրգեթի մոտ եր ասլում այն մարդը, վորին պիտի հանձնեյի ինձ հետ բերած թղթերը: Հիշեցի, վոր Սերգոյի բակում չինարի ծառ կար տնկած, և տունը ըետոնն սանդուխքներ ուներ...

Մոտեցա ներկած գարպասի գոանը...

Ուշագրությամբ նայում եմ չինարու ծառին...

Իմ ծանոթ բակն ե, ասացի յես և վստահ ներս մտա:

Բակում յերեխաները ձնագնդի եյին խաղում

Մոտեցա խաղացող տղաներին... Հարց ու փորձ արի. յերեխաները հետաքրքրությամբ շրջապատեցին ինձ և աշխատում եյին վորեե կերպ բավարարել ինձ:

Մի քանիսը մինչի անգամ զգուշությամբ փորձ արին ձնագնդով հյուրասիրելու ինձ... Յես ժպտացի նրանց չարաճիության վրա...

Հարցը Սերգոյի մասին...

— Զգիտեմ, թե ուր ե նատ:

— Տանը չե...

— Ուրիշ տեղ ե գնացել...

— Տանը չի, տանը չի, տանը...

— Կորիք այստեղից, դու ինչ գիտես, վոր մեջ ես խառնվում:

Գլխի ընկա, թե ի՞նչ եր նշանակում յերեւանէրի այսպիսի կցկոուր ու աննշան պատասխանաներ տալը:

— Բայց յես քեզ ճանաչում եմ, — սկսեց խոսակցել ինձ հետ կողքիս կանգնած տասը տարեկան մի տղա, վորը Սերգոյի մեծ տղան եր՝ կարլո անունով...

— Դու չելի՞ր, վոր մի անգամ մեղ մոտ յեկար, — հիշեցրեց փոքրիկ կարլոն և ամաչկոտ ժպտաց:

— Հայրիկս տանն ե, բայց... սպասիր եստեղ... — կարլոն վաղեց դեպի տուն...

Յես նստեցի ձյունոտ գետնին և սպասում եյի կարլոյին:

Շուտով կարլոն վերադարձավ ուրախացած: Նա արագ վաղեց ինձ մոտ, թեիցս բռնեց և առաջնորդեց դեպի իրանց տուն:

Յետեհ սենյակում հանդիպեց ինձ Սերգոն, նա թաղված եր ինչ-վոր զրբերի մեջ: Փոքրիկ ճաշի սեղանի վրա դրված եր վրացական «Երթորա» (միություն) թերթի վերջին համարը...

Այս սենյակի դուռը բացվում եր դեպի բակը...

Փոքրիկ լուսամուտը հաղիկ աղոտ կերպով լուսավորում եր սենյակը:

Բարձրեցի Սերգոյին:

Նա խանդավառությամբ և լարված հետաքրքրությամբ ընդունեց ինձ ու հարց ու փորձ արեց զյուղերի վեճակի մասին:

Նայեցի շուրջու սենյակի չորս կողմը:

Տեսա՝ կանանցից վոչվոք չկար:

Շալվարս ցած քաշեցի և աղջրերիս արանքում կապած թղթերը դուրս քաշեցի:

Սերգոն մի կողմից ծիծաղում եր իմ խորամտնկության ու ճարպիկ ձամբորդության վրա, մյուս կողմից՝ կարկախ նման նորանոր հարցեր եր վրատալիս ինձ:

Թղթերի մեջ ըոլորի մասին տեղեկություններ կային գրած...

Կարլոն կրակը թեժացրեց: Խոսակցությամբ տարված նստած եյին բուխարու մոտ, և շարունակում եյինք քաղցր զրույցը:

Բավկական ուշ՝ Սերգոյի կինը վերադարձավ քառարից: Լրագրեր եր բերել իր հետ:

Բարկացած եր յերեսում:

Ինձ նկատելով՝ թեթև ժպտաց և մոտեցավ, ձեռքովեց:

— Ի՞նչ նորություն կա, Վարդո:

Վարդոն կնճոռուվեց... բայց հարցին չպատասխանեց:

— Ի՞նչ նորություն կա...

— Մերոնց ուղարկում են Բաթում... արգեն հըրաման տված եւ:

— Ֆըռնտը:

— Ֆըռնտը Սաջեվախոյի կամուրջի վրա յե...

— Սաջեվախոյի:

— Պաշտոնական հայտարարությունն այդպես ե, ինչպես ասում են՝ վաղը չե մյուս որը կարծեմ արգեն Ողուրդեթ պիտի մտնեն:

— Վարդու, — Սերգոն ուրախ կանգնեց վոտքի և  
 արագ-արագ սկսեց ձեռքերը տրորել:  
 — Ուրախանալու ի՞նչ կա այստեղ; Մերոնց վոր  
 մի շան պատահի?  
 — Վոչինչ չեն համարձակվի անել... թեկուղ...  
 Սերգոն մուլլվեց...  
 Գուցե մի բանով կարելի լինի ոգնել... Վարդու,  
 մի կերպ նամակ հասցնենք բանտը...  
 — Հետո,  
 — Թեն նամակով ի՞նչ կարող ենք անել...  
 — Հետո այն, վոր մինչև նրանց բանտից դուրս  
 բերելը, զորքը կարողանա հասնել...  
 Մաղերս բիղ-բիղ կանգնեցին վախից... զորքի  
 անունը լսելիս, և բանտի մասին յեղած տեղեկու-  
 թյունները մտածմունքների մեջ գցեցին ինձ...  
 — Պատասխան կդրե՞ք շուտ, — յես ել խառնվեցի  
 նրանց խոսակցության մեջ,  
 — Այս բոպեյին, Գարն ջան... իսկուն կդրեմ...  
 Սերգոն նստեց սեղանի մոտ, նամակը պատրաս-  
 տեց և հենց են ե, յերբ ուզում եր նամակը հանձ-  
 նել ինձ, հանկարծ լսվեց թնդանոթի վորոտ:  
 — Կեցեն, ուռա, մերոնք են... — հանկարծ ուրա-  
 խացած բացականչեց Վարդոն և դեպի պատշամու-  
 թուալ...

Գը՛ռ—գը՛ռ-ռ-ռ-ռ՝ լսվեց նորից թնդանոթնե-  
 րի միահամուռ դղրդոցը շատ մոտիկից, կարծես մի  
 քանի քայլի վրա լինեն կանգնած...

— Բաթումի կողմից պետք ելինի... — ասաց սե-

նյակ վերադարձող Վարդոն. — յերեխ այլևս չեն հասցնի.  
 մերոնց ուզարկելու:  
 — Վայ թե այստեղ գնդակահարեն...  
 — ԵԵհ, դու ել միշտ վատ յենթաղլություններ  
 ես անում. չեն կարող գնդակահարել...  
 Նյարդային գրություն ստեղծվեց:  
 Սերգոն նամակը հանձնեց ինձ, բայց...  
 Այժմ մտածմունքների մեջ եյի ընկել, թե հա-  
 պիսի ժամանակ մենակ ի՞նչպես վերադառնամ...  
 — Գարն, տար այս նամակը, բայց լավ իմացիր,  
 վոր սա մեր հաղթանակի առաջին ազգանշանն ե...  
 Հո չես վախենում:  
 Յես տատանվեցի, բայց ամոթ համարեցի բացա-  
 սական պատասխան տալ. սիրտ առած՝ պատասխա-  
 նեցի.  
 — Ինչից պիտի վախենամ:  
 Նամակը սովորական տեղում պնդացը և խառ-  
 նաշփոթ մտքերով ճանապարհ ընկա:  
 Հենց վոր դարպանի դռանը մոտեցա, հանդիպեց  
 ինձ գլխարբեց, քրանակոխ յեղած մի մարդ:  
 — Սերգոն տանն ե, — հարցըց նա ինձ շնչառ-  
 պառ:  
 Յես վոչինչ չկարողացա պատասխանել...  
 — Ո՞վ եք դուք, — մի կերպ կարողացա հարցներ—  
 ինչիւ յեք ուզում Սերգոյին:  
 — Մերոնք մտնում են քաղաք, հանդիպում ե  
 հարկավոր...

Սերգոն այս լսելուն պես՝ դուրս թռավ սենյակից  
և ուրախացած կանչեց.

— Նամակը յետ տուրք ինչի մասին վոր հաղորդված էր այս նամակում, այլևս հարկավոր չե... թոփը շուտ դեպի Զոխատառը և հայտնիր բոլորին, վոր մենշիկները տապալվեցին...

Յես ուրախությունից վերավեր եյի թռչում...

Ահա, մի յերկորդն ել վազելով գալիս և Սերգուր մոտ...

— Մերիայումն են... շուտավ կմտնեն... դիմավորի պետք ե... գնանք շուտավ...

Յես գլխապատճե սլացա դեպի մեր տուն և յերբ փողոցի շրջման տեղում յետ նայեցի, Սերգոն ու նրա մոտ յեկած մարդիկ այլիս չեյին յերկում ձանապարհի վրա...

\*  
\* \*

Ի՞՞ս Ռզուրդիթ ձանապարհվելու որը, յերեկոյան, հայրս Զոխատառը յեկել, ինձ մոտ, և ինձ և հարցրել...

Յես տանը չեմ յեղել իհարկե, Պատասխանել են նրան, վոր ինչ-վոր տեղ և գնացել բայց մեզ վոչինչ չի ասել:  
Հայրս վախեցել ե և վատ ե զգացել:  
Նա վարտեղից պիտի իմանար, վոր յես ընդհատակա անեգաւ աշխատողներից եմ և նրա տեսակետների և աշխարհայացքի խիստ հակառակորդ:  
Վեր եր կացել, գնացել միլիցիատուն և հայտնել

Հրանցիմ կորստի մասին և խնդրել միջոցներ ձեռնարկել՝ ինձ գոնելու համար: Հայրս չեր զլացել նաև իմ զիմագծերի, հագուստի և այլ բնորոշ նշանների մասին աեղեկություններ տալ միլիցիատանը: Վերադառնում եմ Ոզուրդեթից բավական լավ նորություններով բեռնավորված, և հանկարծ ձանապարհին միլիցիաները կանգնեցրեց...

Հանեց ինչ-վոր թուղթ. ուշադրությամբ նայում եր իր թղթին, ապա ինձ վոտից գլուխ. նորից նայեց, նորից չափեց — ձեեց:

— Եդ նշանները չեն հիշեցնում ես աղային, — հարցրեց միլիցիաներին նրա կողքին կանգնած յերիտասարդը և տարորինակ կերպով ժպատաց:

Հանկարծակի յեկած վոչինչ չկարողացա զլսի ընկնել, թե բանն ինչումն ե...

— Անցիր, աղա, ինչ վոր մեկին նմանեցրինք, — ձեռքը թափ ավեց միլիցիաները, մինչեւ իսկ ձամբորդ տղայի ով լինելն ել չհարցրեց...

— Կայց, ապասիր մի փոքր, այ աղա, — նորից կանչեց իմ յետեից միլիցիաները, — վարտեղից ես գալիս:

— Ոզուրդեթից, — պատասխանեցի յես:  
— Ի՞նչ նոր բաներ կան Ոզուրդեթում:  
Այստեղ շաղկապում են իրար և ամբողջացնում ջարդված շոգեմեքենաները, այստեղ են վազում ամեն առավոտ, սուլիչի ազգանշանից արթնացած ջլուտ բազուկներով բանվորները.. վորոնք աշխատանքի խիստ բաժանման հիմունքով՝ մեծ ջանասիրությամբ աշխատում են իրենց հատկացված դադարի մոտ, և կայծակի արագությամբ շարժման մեջ են դնում գործիքները, կանոնավոր տեմպով զնդանին տալիս մուրճերի հարվածներ...

Ժանդուած մասերը փոխարինվում են նորերով, փոխվում են անիվները, պտուտակները, խողովակները և այլն...

Ներկվում ե շոգեմեքենան և առողջացած ու հիմնավոր նորոգման յենթարկված՝ անցնում ե աշխատանքի:

Տարեկան վաթսունից ավել շոգեմեքենա յե վերանորոգվում թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցում։ Վաթսունի չափ փշրված ու ջարդված շոգեմեքենաներ դուրս են գալիս գերեզմանոցից և դըրվում են շարժման մեջ...

Այսպես ուրեմն ժամանակավոր բնույթ ունեցող հիվանդություններից՝ արատներից շոգեմեքենաները բուժվում են գեղոններում։ Սակայն այս թիվը չի բավարարում մեր յերկրի շարժմանը, յերկաթուղային հսկա յերթեեկությանը։

Դեպոներ կան—թագվում, Բալաջարի կայարանում, Գյանջայում, Թիֆլիսում, Լենինականում, Խաչուրում, Բորժոմում, Շորապանում, Սամարեղիայում, իսկ գործարաններ՝ թիֆլիսում և առաջին ոգնության գործարան՝ թագվում։ Սակայն սրանք բոլորը չեն բավարարում տարփա պահանջներին, և հաճախ մեր արատավոր շոգեմեքենաներն ուղարկվում են Ռուսաստան՝ այնտեղ վերանորոգման յենթարկելու համար։

Աճում ե շարժումը... աճում ե նաև շոգեմեքենաների ընդհանուր թիվը...

Շատանում—ավելանում են նախ աշխատող ձեռքերը, և աշխատանքի ու շարժման բովի մեջ կորած լենինյան թաղը ներկայումս պարծանքով նայում է իր առաջ ձառացած հեղափոխական անցյալով ուղար-

ցած և աշխատանքի փոթորիկների բովի մեջ կազմակերպված մարտիկ պրոետարիատին, վորոնց ուժի մասին ակնհայտ կերպով խոսում են փալլիող դազգյաները, դինամոների աղմուկն ու իրար կողքի շարեշար կանգնած, աշխատանքի և շարժման համար կազմ ու պատրաստ՝ յերեկվա արատավոր ու հիվանդ շոգեմեքենաները։

Զափազանց խոշոր ե գործարանի և գործարանի արտադրանքի ընդհանուր արժեքը—նշանակությունը, սակայն ել ավելի խոշոր ե և հսկայական այն վոգեորությունը՝ ենտուզիազմը, վոր կը ուղարկե իր սրատում յուրաքանչյուր յերկաթուղային քանվոր, վոր աշխատում և զպրոցում, գեղոյում, արհեստանոցում, դաղգիահի վրա թե դաղյահից դուրս։

### Ի՞ՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆԻՑ

Դղրդում ե գեղոն իր ցեխերով...

Դազգահների մոտ զինված—կազմ ու պատրաստ կանգնած են մազութի մեջ կորած վարպետները։

Լծակները փոկերի վրա սկսել են իրենց աղմուկը, իսկ ոժանդակ փոկերը շարժման մեջ են դնում ձախարակագործական (խառատի) և փականագործական դաղգիահները։

Զրնգում ե բոցավառված դարբնոցը և տաք-տաք պտուտակները կյանք են առնում շոգեմեքենաների համար...

Տրիփոնը հանգիստ սրտով դննում ե նոր ձուլած

շոգեմեքենայի մասերը, և վորոշ դանդաղություն ե-  
նկատվում նրա այդ աշխատանքի մեջ:  
իսկ բրիգադն անցել ե հարվածային աշխատանքի:  
— Ե՛ դու՛ ի՞նչ ես քիթդ կախել եղ պտուտակի  
վրա և դրանից ել չես պոկ գալիս:  
Տըփոնը սթափվեց անսպասելի կանչից և պտու-  
տակը մի ձեռքից մյուս ձեռքն անցկացրեց՝ նորից  
նա իր ուշագրությունը բեկուց պտուտակի վրա—  
վարպետի նկատողությունը թողնելով անպատճան:  
— Չես լուս, —կըկնեց բրիգադի գլխավորը:  
— Վնասված ե և...  
— Ի՞նչից ե վնասված...  
Վարպետը մոտեցավ Տըփոնին, մուրճը խըեց իր  
գոկտումը և ուշագրությամբ սկսեց զննել պտու-  
տակը:  
— Ի՞նչիմն ե սրա վնասվածությունը...  
— Ահա, տեսեք, փոքրիկ ծակոտիկներ ունի...  
— Ա՛յ, անջնորհք մարդ, քանի՞-քանի անգամ ասել  
եմ, վոր այսպիսի աննշան ու չնչին ծակոտիկների  
վրա ուշք մի դարձնի:  
— Ֆիզիկայի որենքների համաձայն...  
— Ի՞նչն. ֆիզիկա, —ընկերներն սկսեցին ծագրել  
Տըփոնին:  
— Ֆիզիկայի որենքների համաձայն անցք ունեցող  
տեղերը ջերմացնելու ժամանակի...  
— Լավ ե՛ գլուխ մի տանի... բավական ե, վերջ

նում ե իր ֆիզիկայի որենքներով. գլուխն իսկական  
ինժեների տեղ ե դնում...  
— Ի՞նչպես թե, մարդը ֆիզիկոս ե...  
— Պրոֆեսոր ե...  
— Բավական ե, ընկերներ, վերջ ավելք... իսկ դու  
պտուտակը տուր ինձ և գործիդ նայիր... դուք ին-  
չու յեք կանգնել, բոլորդ գեպի գործ, անցեք դազ-  
գյահների...  
Լավեց բրիգադի գլխավորի հրամանը, և խմբից  
խումբ անցնելով այդ կարգադրությունը, նորից ըս-  
կըսեցին աղմկել կարճ ժամանակով դադարած դազ-  
գյահները:  
— Յես հակառակ եմ շոգեմեքենայի վրա անց-  
կացնելու այդ պտուտակը, մնացածը դուք գիտեք,  
ինչպես ուղեք վարվեցեք... շատ հավանական ե, վոր  
պտուտակն անմիջապես կոտրվի, հենց վոր կոկսեք  
տաքացնել շոգեմեքենան...  
— Դե, ի՞նչ ասեմ, բալամ, են ա վարպետը դու  
յես յեղել սիրելի Տըփոն. արի, դու իմ տեղն աշ-  
խատիր, իսկ յես դառնում եմ քո աշկերտը...  
— Յես մրցման չեմ մտնում վորեւ մեկի վար-  
պետությունը խլելու համար. միայն գիտել եմ տա-  
լիս, վոր ֆիզիկայի որենքների համաձայն, անցքեր—  
փոքրիկ ծակոտիկներ ունեցող պողպատը չերկար դի-  
մանալ չի կարող...  
— Լավ, լավ, գլուխներս մի տանի քո ֆիզիկայով  
ու մաթեմատիկայով, Քսան տարի յե՛ վարպետու-  
թյուն եմ անում. եդ քո ֆիզիկան ու մաթեմատի-

կան վոր չեմ իմացել, պակաս եմ շոգեմեքենաները  
նորոգել ու գործի՛ դրել...

Տրիփոնը լոեց, մտածմունքների մեջ ընկալի...  
տեսնում ե և զգում յուրաքանչյուր ըոսե, վոր իրեն  
ծաղրում են, վոչնչի տեղ են զնում, յերբ նա ֆիզի-  
կայի անունն եր տալիս կամ գիտական վորեւ տեր-  
մին եր գործ ածում:

Տրիփոնն ավարտել եր ինդուստրիալ տեխնիկումը  
և ավարտել եր գերազանց վկայականով...

Մաթեմատիկական գիտելիքները և հասկապես  
ֆիզիկան ու քիմիան շատ լավ եր յուրացրել. հենց  
այդ ե պատճառը, վոր տեղը յեկած ժամանակ միշտ  
առաջ եր բերում ֆիզիկայի և մաթեմատիկայի փոր-  
մունիքը, բայց...

Բարձրանում եր հանկարծ ծաղրանքի հեղեղ, և  
նա լուս, գլուխը կախ կանգնում եր դաշտահի  
մոտ:

— Ի՞նչ ես շշմել ել չես աշխատելու, — նորից  
Տրիփոնի վրա գոռաց զայրացած վարպետը և դաշ-  
դիահի մեջ ամրացրած պտուտակի վրա պատրաստ-  
վեց աշխատելու...

— Վարպետ, հանիր դրան մեր բրիգադից...

— Լավ, հանեմ, լայց հւը ուղարկեմ... յեթե մեղ  
մոտ չի կարող աշխատել և մեղ պետք չի գալիս, ել  
ում կարող ե պետք դաւ...

— Ուզարկենք ինստիտուտ, այնտեղ կարող ե վոր-  
պես լեկտոր պետք դաւ...

Տրիփոնը վիրավորանքից կարմրած՝ չեր ի-  
մանում ինչ անի...

— Լավ, բավական ե, տղաներ, գործի՛ անցեք.  
վաղը պատրաստ շոգեմեքենան պիտի բաց թողնենք  
արհեստանոցից:

— Տրիփոն, արի մտիր այս շոգեմեքենայի մեջ և  
այսոր նրա ներսում կատարիր աշխատանքներդ:

— Թող դա ել աշխատի...

— Թող մի որ ել դա մրոտվի, ինչպես մենք ենք  
ամեն որ մրոտվու

— Ցես յերբեք կեղտոտվելուց ու մրոտվելուց չեք  
քաշվել միամիտ մնացեք, ինչո՞ւ չե, սիրով կաշխա-  
տեմ:

Տրիփոնը ներս սողաց շոգեմեքենայի մեջ, և մի  
քանի վայրկան հետո շոգեմեքենայի ներսից լսվեցին  
մուրճի զարկի խուլ ձայներ...

Բրիգադն աշխատում եր արագ կերպով վերջաց-  
նել շոգեմեքենայի շվրա կատարվելիք աշխատանք-  
ները:

Վագոնների խումբը կազմ ու պատրաստ սպասում  
եր իր առաջնորդ շոգեմեքենային:

## ՇՈԳԵՔԱՐՏՇԱԾ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՓՈՐՁԻ

Շոգեքարշը նշանակված ժամկետին պատրաստ եր  
արդին...

Այդ մասին լուր ուղարկեցին գեղոյի գլուխվո-

ըին և այսոր, ժամը յերկուսին պիտի փորձեն շոգե-  
քարշը յերթի ժամանակ:

Բրիգադը սրտատրովի սպասում և շոգեքարշի շարժ-  
վելուն... իսկ շոգեքարշը կազմ ու պատրաստ հպարտու-  
րեն կանգնած և գլխավոր յերկաթղծի վրա և սպա-  
սում և ազդանշանին...

Յեկավ նաև դեպոյի գլխավոր ինժեները, բրիգադը  
պատրաստ ե...

Տրիփոնը շարունակ պտտվում և շոգեքարշի չորս  
կողմը և աչքը չի հեռացնում վնասված պտուտակից,  
վորի մասին մատնացուց եր արել իր վարպետին:

Տրիփոնը շատ լավ գիտե, թե շոգեքարշի վճռ մա-  
սումն և պնդացրած այդ վնասված պտուտակը...

Նրան չափազանց հետաքրքրում ե, թե այդ պը-  
տուտակը վնասան ժամանակ կկարողանա դիմանալ..

Հետաքրքրվում ե, վորովհետեւ դրանով հնարավո-  
րություն կունենա հաստատելու ֆիզիկայի որենք-  
ները:

Ազդանշան տվին...

Շոգեքարշը ֆշաց...

Բոլորն ել շրջապատեցին վերակենդանացած շո-  
գեքարշը, և ամեն մեկն իր դիրքը գրավեց լավ դի-  
տելու համար...

— Գնում ենք, — հայտարարեց բրիգադի գլխա-  
վորը, մեքենավարը շարժման մեջ գրեց շոգեքարշը,  
սուլեց, փնչաց, գոլորշին գուրս ժայթքեց ու դան-  
դաղորեն և հանդիսավոր շարժվեց իր տեղից...

— Շըշշշշ—լսվեց խուլ վշշոց և կապարագույն

գոլորշին ամպի նման ձգվեց նրա յետելից ամբողջ  
յերկաթղծի յերկայնքով...

— Դուզ—դուզ, դուզ—դուզ, դը գը դը գը~դը գը~  
դգգում և արագ վազքի անցած շոգեքարշը և պայ-  
քարի յե մտել դեպի նավթլուղ կայարանը ձգվող  
կերելը հետ:

Շոգեքարշը բավական ճանապարհ եր կտրել ան-  
ցել եր արգեն նախկին կորանոցների մոտից:

Սլանում և շոգեքարշը մի ժամում 60 կիլոմետր  
արագությամբ, և բոլորն ել գոհ են ակնհայտ հաջո-  
ղությունից ու նվաճումից...

Վարպետը հպարտությամբ գլուխը բարձր պահած՝  
նայում և դեպոյի գլխավորի աչքերին և ցույց տա-  
լով յերկաթղծի ուղղությունը՝ պարձենալով բացա-  
կանչում ե.

— Յեթե ճանապարհը հարթ լիներ, շոգեքարշին  
կարող ելինք տալ նույնիսկ 80-կիլոմետրյան արա-  
գություն:

Սլանում և շոգեքարշ...

Գոլորշու ջրի կաթիները տարածվում են ողի  
մեջ և շաղ լնկնում համախ ճամբորդների յերեսին...

— Շըշշշշ—հանկարծ ֆշաց շոգեքարշը...

Անիվի վերի մասից հանկարծ գոլորշի դուրս  
ժայթքեց և արագությունն սկսեց լանդաղել...

Մինչդեռ մոնոմետրը բարձրացել ե մինչև վերջը,  
շոգեքարշի արագությունը քանի գնում պակասում ե,

— Ի՞նչ ե պատահել:

— Ի՞նչ յեղավ:

— Քոլորշի յե դուրս գալիս անիվի վերի մասից և  
շոգեքարշի արագությունը քան գնում նվազում եւ

— Շոգեքարշը կանգնեցրեք:

Շոգեքարշը կանգ առավ:

— Ուշադրությամբ զննեցեք բոլոր մասերը...

— Առանձնապես ուշադրության առեք շոգետար-  
խողովակները...

Տրիփոնը դուրս ցատկեց շոգեքարշից և արագու-  
թյամբ դեպի վնասված պտուտակը վագեց...

Բոլորն ել հետաքրքրությամբ վորոնում են և  
ուզում են գտնել—իմանալ շոգեքարշի ընթացքի  
դանդաղելու պատճառը:

Վորոնում են, զննում բոլոր մասերը, սակայն  
վոչոք վոչինչ չի կարողանում հայտնաբերել:

Տրիփոնը մոտեցավ շոգեքարշի ծանոթ մասին, նա-  
յեց պտուտակին և...

— Այ տեսեք, հիմա ել չպիտի հավատաք ինձ,—  
զայրացած բանցականչեց նոտ:

— Ի՞նչ ե պատահել—հարցրեց դեպուի գլխա-  
փորը...

— Ի՞նչ ե յեղել—այս ու այն կողմից բացական-  
չեցին բանվորները խմբվելով Տրիփոնի շուրջը:

— Վնասված պտուտակը դուրս ե ընկել:

— Վնասված պտուտամկը —մոռալվեց վարպետը:

Դեպոյի գլամուրը գարմացավ և չեր կարողա-  
նում հասկանալ, թե ինչն շոգեքարշի այդպիսի հա-  
սարակ վնասվածքի համար այդքան մռալվեց վար-  
պետը:

— Ի՞նչն այդպիս նեղացար ու մռալվեցիր, վա-  
նո. չե՞ վոր շատ հեշտ ե պտուտակը փոխել և շոգե-  
քարշը նորից շարժման մեջ դնել...

— Բանը պտուտակը փոխելու մեջ չե, այլ այն,  
վոր...

Յեվ վանոն ամեն ինչ պատմեց դեպոյի գլխավո-  
րին:

— Բանից դուրս ե գալիս, ընկերներ, ֆիզիկան,  
այս, ֆիզիկան խխտ անհրաժեշտ բան ե յեղել մեզ  
համար... Յես քսան տարվա վարպետ տեղովս չկա-  
րողացա գլխի ընկնել այն, ինչ վոր գլխի ընկնավ և  
առաջուց հասկացավ յերեկվա աշակերտական նստա-  
րանից վեր կացած և գրքի փորմուներն անդիր ա-  
րած տղան. ախր նա յեր, վոր շարունակ պնդում եր,  
թե վնասված պտուտակը վոր տաքանա, շատ չե դի-  
մանա և շոգեքարշին վնաս կտա: Ահա թե վճռեղ ե դի-  
տության ուժը... մարդը զիտակ եր գործին, իսկ  
մենք ծաղրանքով եյինք վերաբերվում նրան, քանի  
վոր մենք բոլորս վոչինչ չեյինք հասկանում ֆիզի-  
կայից:

Բոլորն ել ամոթանքով նայում եյին Տրիփոնին  
և կարծես իրենց հայացքով ուզում եյին ներողու-  
թյուն խնդրել նրանից. սակայն Տրիփոնն իր  
ֆիզիկայի և մաթեմատիկայի փորմուներով այն-  
քան եր հափշտակված, վոր չեր ել նշանառում, թե  
ինչ ե կատարվում իր շուրջը:

— Կեցցես, Տրիֆոն, — զովասահնքի ար-  
ժանացը Երիփոնի արարքը դեպոյի զԼիսավորը և ան-  
միջապես հրաման արձակեց տռաջ քաշել Տրիփոնին  
և կըկնապատկել նրա աշխատավարձը:



## ԱՆՑՈՒՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ

(Ա. Գ. Ռ Խ Բ Խ Ա Ն Ս.)

— Գիտե՞ս՝ ինչ են պատրաստում այնտեղ, — հարց-  
նում է խաղալու համար գաշտ գուրս յեկած պիո-  
ներն իր ընկերոջը, մատը մեկնելով դեպի հեռվում  
յերեցող աղյուսի գործարանի խողովակը:

— Գիտեմ...

— Ի՞նչ են պատրաստում:

— Ի՞նչ են պատրաստում, այ, ասեմ...

— Տեսնեմ ես, չգիտես:

Ըսդհանուր ծիծաղ-աղմուկ բարձրացավ ռազմիկ-  
պիոներների շարքերում:

— Դու գիտես ի՞նչ են պատրաստում, վոր ուրի-  
շին ես հարցնում, — վիճաբանության մեջ խառնվեց  
կուվարը:

— Իհարկե գիտեմ, ընկեր կուվար, այնտեղ աղ-  
յուսներ են կտրում...

— Աղյուսն ի՞նչպես են կտրում, — ամաչելով հարց՝  
 բեց մեկը և նայեց մյուսների դեմքերին:  
 — Զգիտեն՝ ինչպես են կտրում, վայ, աշխատան-  
 քից խարարություն չունի ես մեր ընկերը:  
 — Դու շատ ես իմանում, վոր եղալես խոսում ես...  
 — Իհարկե իմանում եմ, հայրս գյուղում աղյուս-  
 պատրաստող ե լեզել, և յերբ յես սովորում եյի  
 գյուղի գարոցում, աղաս ժամերիս միշտ ոգնում եյի  
 հորս—աղյուս կտրում, վոչ միայն այդ, այլև ոգնում  
 աղյուսները թրծելու—կարմրացնելու ժամանակ...  
 — Դե վոր այլպես ե, թեսիլ ջան, պատմիր մեզ,  
 թե ի՞նչպես են աղյուսը կտրում, թրծում...  
 — Պատմիր, թեսիլ, պատմիր, խնդրում ենք:  
 — Տղերը, — հանկարծ բացականչեց վալիկոն:  
 — Ի՞նչ կա, ինչ ես ուզում:  
 — Ինչու թեսիկոն պատմի... ավելի լավ չե՞ բոլորս  
 գնանք աղյուսի գործարանը և այնտեղ զլույց լա-  
 նանք աղյուս պատրաստելու միասին, մանավանդ  
 վոր, ինքներս կըտեսնենք աղյուս պատրաստելու գործը:  
 — Իհարկե ավելի լավ ե, զնանք բոլորս, — հաս-  
 տառեցին ընկերները:  
 — Ընկեր կոլվար, տար մեղ բոլորիս աղյուսի  
 գործարան:  
 Պինկեր-սալմախումբը հանգ առավ:  
 — Խոսենք զործարանի գիրեկառի հետ, վոր  
 թույլ տա մեզ աշխատանքները գիտելու:  
 Կոլվարն իր հետ վերցնելով պիոներից յերկու-  
 սին՝ ուղղվեցին գեղի գործարանի գրասենյակը:  
 — Համեցեք, — լավեց քաղաքավարի պատասխան:  
 Այսպիսի ջերմ ընդունելությունից սիրտ առած՝  
 ուղմիկները մտան աղյուսի գործարանը. Լարված  
 հետաքրքրությունն ընդհանուր եր...

— Քավերով առաջ, — լավեց կոլվարի հրամանը, և  
 ալիներ-սալմախումբը ուղղվեցին դեպի գործարան:  
 Դեռևս անընակ ե գեղի աղյուսի գործարանները  
 տանող հարթ տարածությունը. Մի քսնի տարի ա-  
 ռաջ այս ամբողջ քաղաքամտառում պահապանի նման  
 կանգնած եր համալսարանի շենքը և նախկին սեմի-  
 նարիան... իսկ այսոր... թեև գեռես վերջնականապես  
 կարգավորված չեն բնակելի վայրերը, նոր կառու-  
 ցած շենքերը... պլանավորված լայն փողոցները...  
 ելեկտրաքարշի սյուները... տեղ-տեղ աղաս լայն  
 հրապարակներ՝ իսկ սրանց շուրջը՝ միքանի աղ-  
 յուսի գործարանները...  
 — Կանգնել:  
 Պիոներ-սալմախումբը կանգ առավ:  
 — Խոսենք զործարանի գիրեկառի հետ, վոր  
 թույլ տա մեզ աշխատանքները գիտելու:  
 Կոլվարն իր հետ վերցնելով պիոներից յերկու-  
 սին՝ ուղղվեցին գեղի գործարանի գրասենյակը:  
 — Համեցեք, — լավեց քաղաքավարի պատասխան:  
 Այսպիսի ջերմ ընդունելությունից սիրտ առած՝  
 ուղմիկները մտան աղյուսի գործարանը. Լարված  
 հետաքրքրությունն ընդհանուր եր...  
 Բեսիկովի համար ոտարութի յերեաց քաղաքի  
 աղյուսի գործարանը... Նա, ճիշտ ե, աշխատել ե  
 հոր հետ միասին գյուղում աղյուսներ պատրաստե-  
 լու գործում, սակայն այստեղի աշխատանքի պայման-  
 ները բոլորովին այլ եյին, կարդ ու կանոնը՝ տարբեր:  
 — Սա այստեղից ե սկսվում աղյուս պատրաս-  
 տելու պատմությունը, — սկսեց իր գրույցը գործա-

բանի դիրեկտորը և ընդհանուր հայացք ձգեց բոլոր  
պիոներների վրա.—ամենից առաջ, քլունդներով աշշ-  
խատող բանվորները քանդում են գետինը և կալ են  
պատրաստում:

Վողջ պիոներական ուսումախումբը լսողություն եր-  
դարձած:

Բեսիկոն ել աչքերը չուած՝ ավելի մոտե-  
նում եր դիրեկտորին...

— Յերբ արդեն պատրաստ ե լինում կավահողը,—  
շարունակում ե խոսել դիրեկտորը, — այն բանվոր-  
ները, վորոնք աշխատում են բացառապես կավահողը  
զտելու-մաղելու աշխատանքի վրա, անմիջապես վերց-  
նում են կավահող թմբերը և մաղում—մաքրում են,  
շաղախելու համար պատրաստ կավը կիսնորում—  
շրորում են խորը փոսերի մեջ... շաղախած կավա-  
ցեխով լցվում են աղյուսի կաղապարները (աղյուսա-  
նման արկղները) և գեռես հում վիճակում, վորոշ ձեռ-  
ոտացած աղյուսները դարսվում են շարք-շարք ահա-  
յն բաց միջանցքում՝ չորանալու համար:

Չորացած ալյուսներն ապա տանում ենք դար-  
սում հնոցների մեջ, վորոնք կոչվում են Հոփմանի  
վառարաններ. վառարանը տաքանում ե, և մի քանի-  
որից հետո անդույն, անուժ աղյուսների փոխարեն  
վառարանից հանում ենք կարմրած, քարի համան  
պինդ աղյուսներ, վորոնցով հետագայում կառուցում  
մեր ֆարբիկ—գործարաններնու բնակելի շեն-  
քերը...

— Այդ շատ լավ, բայց յեթե վատ յեղանակներ

են լինում, ինչպես եք չորացնում աղյուսները,—  
անհամբեր հարցը բեսիկոն՝ հիշելով իրենց գյու-  
ղում, հոր հետ միասին աղյուսներ պատրաստելու  
աշխատանքները, յերբ հայրը խիստ ծանր և մտահո-  
գիչ վիճակի մեջ եր ընկնում-անձրեսու յեղանակների  
ժամանակ:

— Վատ յեղանակներն անշուշտ արգելք են հան-  
դիսանում մեր աշխատանքներին, — պատախանեց  
Բեսիկոյին գործարանի դիրեկտորը, — հենց դրա հա-  
մար ել մեր աշխատանքները սեղոնային բնույթ ու-  
նեն. — հոկտեմբերից մինչև ապրիլի 15-ը գործարանը  
համարյա թե չի գործում... միայն զրադկում ենք  
հում նյութ կամ կավահող պատրաստելու գործով;  
աշխատանքները գործարանի մյուս բոլոր ցեխերում  
թե դադարած են... միջանցքներ ել (ծածկ ունեցող)  
այնքան չունենք, վոր թաց աղյուսները միջանցք-  
ներում չորացնենք. այնպես վոր մեր վողջ աշխատ-  
ուանքը կախված է արեի ճառագայթներից...

— Ուրեմն քաղաքում ել չի կարգավորված գեռես  
աղյուսների չորացնելու գործը, — ցածր ձախով նոշից  
հարցը բեսիկոն...

— Ինչպես տեսնում եք, մեր գործարաններում ճշշ-  
մարիտ ե, շատ նվաճումներ ունենք՝ գյուղի պայման-  
ներում աղյուսներ պատրաստելու աշխատանքների  
հետ համեմատած, բայց մեր աշխատանքներն այնու-  
ամենաչնիվ կապված են սեղոնի հետ և կատարվում են  
մեծ մասամբ ամառավին ամիսներին... հենց այդ պատ-  
ճառով ել շատ հաճախ մեր գործարաններն ի վիճակի

Հեն լինում քաղաքի բոլոր պահանջները բավարարեն լու աղջուսները մատակարարելու գործում... Մեր գործարանները շատ հաճախ բաց են թողնում շուկա՝ նույնիսկ պակաս վորակի աղյուսներ. անպետքները բավական տոկոս են կազմում. այնպես վոր մեր աշխատանքների մեջ գեռ շատ բան կա, վոր կարիք ե գումար բարեկավման:

Սակայն աղջուսի գործարանների աշխատանքները խիստ սերտորեն կապված են այն մեծ նվաճումների և շինարարությունների հետ, վոր դուք տեսնում եք, փոքրիկ չնկերներ, մեր խորհրդային իրականության մեջ, թեկուզ հենց մեր Թիֆլիսի շինարարության մեջ...

Դիրեկտորը ձեռքը մեկնեց դեպի նորակառուց լենինյան թաղամասն ու տարածվող ընդարձակ հարթյությունը, հապարտուն աչք ածեց քաղաքի դանաշը անկյուններում նոր կառուցած վիթխարի շինություններին և ժամանակ գլուխից կախեց ցած...

Պիոներները ցրվեցին գործարանի բակում, իսկ Բեսիկոն շարունակ հետեւում եր դիրեկտորին և նրանց չեր բաժանվում...

Բեսիկոն նկատեց բակի մի կողմում մաղի տակով անցրած բավական մաքուր կավանող... մտածմունքի մեջ ընկավ... Սակայն չկարողացավ հասկանալ, թե աղյուս պատրաստելու գործում ինչ նշանակություն ունի այսպես մաքուր մաղած կավանողը, քանի վոր Բեսիկոյի հայրը յերբեք առանձին հոգաւարը չեր լինում կավանողը մաղելու և մաքրելու համար:

— Քեոի, ինչո՞ւ համար և պահված այս մաղած կավանողը:

— Այդ պատրաստված և կղմինդրի համար: Գիտես կղմինդրի ի՞նչ բան ե, են, վոր գործ են ածում տների կտուրների համար: Կղմինդրը պահանջում և ավելի զիմացկունություն և զգուշավորություն, զրա համար պատրաստում ենք լավագույն կավանողից... մաղած կավանողը, խառնած մանր ավազի հետ, յեթե լավ ե թրծված, ցեմենտի նման պինդ կղմինդր և ստացվում...

— Այդ լավ, բայց չե վոր այժմ ավելս մեր տների կտուրները կղմինդրով չեն ծածկում:

Դիրեկտորը ժպտաց՝ լսելով Բեսիկոյի ձիշտ դիտությունը:

— Շատ ձիշտ և դիտողությունդ. վրա համար ել մենք կղմինդր պատրաստում ենք շատ քիչ քանակությամբ: Յերբեմն, թեև հազվագեղ, այնուամենայնիվ լինում են գեղքեր, յերբ կարիք և զգացվում տան կտուրը կղմինդրով ծածկելու, այդ պատճառով ել մեր գործարաններում դեռևս ձեռք չեն վերցրել կղմինդր պատրաստելու աշխատանքներից:

Պիոներները շատ մանրամասորեն ծանոթացան աղյուսի գործարանի ամեն տեսակի. աշխատանքներին:

— Ինչո՞ւ ձեր գործարանի խողովակն այդքան բարձր և շինված, — դիմեց Բեսիկոն գործարանի դիրեկտորին:

— Խողովակը, — դիրեկտորին տարորինակ թվաց

Բեսիկոյի այսպիսի հարցումը, սակայն նրա լուրջ  
հարցասիրությանը բավարարություն տալու տեսակե-  
տից ուշադրության առավ և բարձր ձայնով կրկնեց  
նրա հարցումը:

— Խողովակը բարձր և նրա համար, վոր վասա-  
րանը, ինչպես տեսնում եք, ածուխով ենք տաքաց-  
նում. իսկ ածուխն այրվելու ժամանակ բաց և թող-  
նում թունավոր գաղեր. և վորպեսզի այդ թունավոր  
գաղերը չվասեն ազգաբնակչությանը, աղյուսի գոր-  
ծարանների խողովակները բարձ են շինում և այդ  
խողովակների միջոցով թունավոր գաղերը տարած-  
վում են ողի վերին շերտերում, ցրվում են և մյուս  
կողմից ել քամին տանում և գեպի հեռուները: Յեթե  
նույնիսկ վառարանները վառելիս լինելին նավթով  
կամ փայտով, միենույն՝ դարձյալ ազգաբնակչության  
առողջապահության տեսակետից՝ պահանջվում է, վոր  
քաղաքը պաշտպանված լինի ամեն տեսակի գաղերից  
և ծխից: Ծուխն անվաս դարձնելու տեսակետից և  
հորինված այս յերկար ու բարձր խողովակը:

Դիրեկտորը մինչև գործարանի գարպասի դուռը  
ճանապարհ գրեց պիտոներներին և ժպտալով բաժան-  
վեց գիտության սիրահար գալիք սերնդի ներկայա-  
ցուցիչներից:

— Քայլերով առաջ, — նորից լսվեց կրկարի հրա-  
մանը, և պիտոներների խուժը շաբքերով շարժվեց  
ու միացավ գորոցի ընդհանուր ժխորին:



## ՏԱՅԻԱՆ

### I

Մանկությունից Տայիան կենդանիներ եր սիրում:  
Դեռ նոր եր վոտք առել, վոր նա գաղտուկ դուրս եր  
պրծնում բակից, մոր ուշադրությունից հեռանում,  
մանում եր մոտիկ գտնված արտը, բոլորից աննկա-  
տելի քաղում եր սոյալի ցողունները և բերում,  
տալիս եր իր սիրելի ջորային:

Զօրան շտապ խլում եր Տայիալի ձեռքից սոյայիր  
ցողունները և անուշ անում իր համար բոլորովին  
անսպասելի կերը:

Զօրան խոտի և կերի շնորհիվ այնքան ընտելա-  
ցավ Տայիալին, վոր բավական եր մի բերան նրա  
կանչը — «մո՛ռ, ջորա, մո՛ռ», իսկուն շրթունքները լի-  
կելով վազում եր գեպի փոքրիկ բարերարը և փոքրիկ  
գելով վազում եր անթարթ նախում Տայիալի ձեռ-  
քերին, թե ինչ կմեկնի նրան:

Եատ հաճախ Տայիան իր սիրելի ջորային հյուրա-

սիրում եր աղով, յերբեմն ճագի հացով, կաղամբով և  
ալին:

Այսպես մեծացավ ու լծկան դարձավ մեր ջորան:  
Տայիան արդեն յոթ տարեկան եր և նրան դպրոց  
ուղարկեցին, այս հանգամանքը փորոշ չափով բաժա-  
նեց իրարից յերկու բարեկամներին: Դպրոցից վերա-  
դառնալիս Տայիան առաջին հերթին վազում եր  
գոյմը՝ իր սիրելի ջորային տեսնելու, յեր իմանում  
եր, վոր նրան ուրիշ տեղ չեն տարել. կիազաքեր,  
ձեռքը կքսեր ճակատին և մի քանի տերեւ պոկելով:  
Կեր կտար նրան, ապա հանգիստ կգար ճաշելու:

Այսպես անցնում ելին որեր ու շաբաթներ:

Զմեռն արդեն իր հոգեարքն եր ապրում:

Գյուղացիների խոսակցության առարկան կուեկ-  
տիվներ հիմնելու ինդիբն եր:  
Քաղաքի բանվորները գյուղ յեկան և այստեղ-  
այնտեղ հավաքությներ կազմակերպելով՝ խոսում  
ելին կուեկտիվների նշանակության մասին... յելութ-  
ներ ունեցան գյուղացիական ժողովներում և վերջն  
ել կուեկտիվներ կազմեցին:

Դպրոցում դասառուն յերեխաներին ծանոթացրեց  
կուեկտիվների նշանակությանը, և միայն այդ ե-  
պստածուը, վոր յեր Տայիայի հայրը տանը հաւանեց  
թե՛ մեր ջորային մացրել են կուեկտիվի ցուցակի  
մեջ, այս հանգամանքը նրան դարմանք չողատճառեց,  
յիշուցից խիստ ցավեց, վոր պիտի բաժանվի իր ջորա-  
յից...

Ամենից շատ Տայիային անհանգստացնում եր այն

հանգամանքը, թե՛ իր ջորան արդյոք բավարար կեր  
կունենա՞ կուեկտիվում: Յերբ նրան համոզեցին ու  
հավատացրին, վոր ջորան այնտեղ յերեք քողոց չե-  
ղալու, այդ ժամանակ նա իրավունք տվեց Նիկոյին  
տանել ջորան ու հանձնել կուեկտիվին:

Նիկոյի անից տարան ջորային, սակայն կուեկ-  
տիվում ել յերկար կանք չունեցավ ջորան. կուեկտի-  
վի անդամների փորոշմանը յեղները բոլորը ծախսեցին  
և ստացած գումարով տրակտոր ձեռք բերեցին:

Տայիան արդեն մոռացության եր տվել ջորային  
և շատ քիչ եր մտածում նրա մասին, սակայն մի յե-  
րեկո հանկարծ հիշեց ջորային և կուեկտիվի աշխա-  
տանքներից վերադառն իր հորը հարցրեց.

— Հայրիկ, մեր ջորան ուր ե. ի՞նչ արին նրան,  
վորը ու առաջդ ե:

Նիկոն կարմրեց. նա շատ լավ գիտեր, թե վորքան  
եր սիրում Տայիան ջորային, վրա համար ել պատաս-  
խանը՝ մի փոքր ուշացրեց:

— Ո՞ւր ե ջորան, — նորից գիմեց հորն իր հե-  
տաքրքրող հարցով և աչքերը չուծ՝ անհամբեր սպա-  
ռում եր պատասխանի:

— Մեր հարեւանի յեղները, սրանց թվում նաև  
ջորան, արդեն ծախել ենք, սիրելիս, ստացած գու-  
մարով տրակտոր ենք ձեռք բերել: Այսուհետեւ մեր  
հոգերը պիտի վարեն կուեկտիվի տրակտորով. հոգը  
կցանի, կհնձի և նույնիսկ կկալի. այնպես վոր մեր  
յեղներին փոխարինել ե տրակտորը, Տայիա...

— Այդ շատ լավ, բայց յեղները:

— Յեղներն ուրիշ տեղ կաշխատեն:

— Ուրիշ տեղ:

— Այս, սիրելիս, ուրիշ տեղ պիտի աշխատեն:  
Մեր կոլեկտիվը բավական մեծ ու ընդարձակ է, բա-  
վարար չափով ել հողամասեր ունենք. դրա համար  
ել յեղներով գլուխ չեցինք հանի. մինչդեռ տրակտորը  
յեղներով ամեն ինչ յոլա յե տանում, շատ  
պողպատե յեզ և ամեն ինչ յոլա յե տանում:

— Տրակտորն ավելի շատ և վարելու, — հարցրեց  
գլուխը կախ գցած Տայիան և մտաքերելով ջորայի-  
ծախելլ՝ աչքերից աղի արցունքներ սկսեցին դոր-  
վել:

— Հայրիկ, յես այնուամենախնիվ ցավում ու-  
խղճում եմ ջորային, — դժոհելով բացականչեց Տայի-  
ան, յերբ նիկոն վերջացրեց իր խոսքը տրակտորի  
մասին:

— Զորան վոչինչ նեղություն չի քաշելու, սիրե-  
լիս, միամիտ մնա ու հանգիստ լեզիր, — հանգստաց-  
րեց նիկոն Տայիային և նորից շարունակեց իր դը-  
րույցը Տայիայի հետ:

## II

Յերկրորդ որը Տայիայի հանգստի որն եր:

Տայիան առավոտ կանուխ զարթնելուն պես՝ հա-  
գակ շորերը, շտապ-շտապ նախաճաշեց և սովորա-  
կան կարգով վագեց ընկերների հետ խաղալու:

Ընկերները, վորոնց համար նույնպես այդ որը

հանգստի որ եր, Տայիայի հետ միասին դուրս յեկան  
դաշտ և տեսակ-տեսակ խողեր կազմակերպեցին:

— Տղերք:

— Ի՞նչ կա, Տայիա, — այս ու այն կողմից ձայն  
ավելին ընկերները:

— Բարկական ե վորքան խաղացինք, այժմ գլ-  
նանք բոլորս կոլեկտիվը դիտելու, տեսնենք՝ ինչպի-  
սի աշխատանքներ են տանում այնտեղ: Գիշերս հայ-  
րեկա պատմեց, վոր կոլեկտիվը ձեռք ե բերել տրակ-  
տոր. հենց եղ տրակտորն ել հետաքրքիր և տեսնել:  
Ի՞նչ կասեք, աղերք:

— Յես ել գիտեմ, վոր արդեն գնված և տրակ-  
տորը, — բացականչեց վալիկոն:

— Դու վարտեղից գիտես, — զիմեցին լուսուրը  
վալիկոյին:

— Ինձ ել հայրիկս և պատմել:

— Հայրիկդ վարտեղից պիտի իմանար, քանի վոր  
նս կոլեկտիվի անդամ չե:

— Դու ի՞նչ գիտես, վոր անդամ չի...  
— Անդամ չի, — նորից կրկնեց թինիան:

— Անդամ չի, — ծոր տալով ու թինիային ծաղրե-  
լով պատասխանեց վալիկոն:

— Ինչժե յես այդպես անում, հայրիկդ չե՞ր,  
վոր կոլեկտիվի գեմ արտահայտվեց ժողովում:

— Լավ ե, վերջ տուր, քննուուի մեկը...  
— Քննուուի դու ի՞ն:

— Ի՞նձուուր դու ի՞ն: — Անդամ չի, — իոսուակ-

ցութիան մեջ խառնվեց Տալիան և նեղացած նայեց  
կովողների դեմքին:

— Ապա ինչու չե ասում, վոր հայրիկս կոլեկտի-  
վի անդամ չե:

— Մինչև այժմ գիտեմ, վոր անդամ չեր, իսկ  
յեթե յերեկ ե մտել, այդ արդեն ուրիշ է.—Թիհիան  
չեր գտարում վալիկոյին բարկացնելուց և մատը  
թափ տալով ավելի և ավելի ջղայնացնում եր  
նրան:

— Ավելի լավ ե, վոր անդամ ե, տղերք. գնանք  
բոլորս և տեղում տեսնենք ամեն ինչ:

— Գնանք:

— Գնանք—ազմկեցին բոլորը և շարք-շարք գե-  
պի կոլեկտիվ տանող ճանապարհն ուղղվեցին. աշ-  
խույժ յերգի ձայնը բարձրացավ գաշտում, և բոլորը  
ուրախ-զվարթ շարժվեցին առաջ:

— Տղերք,—բացականչեց հանկարծ Տալիան՝ մատը  
գնելով ճակատին:

— Ի՞նչ պատահեց, Տայիա:

— Դիտեք ինչ, տղերք, յեկեք նախաձաշտանենք  
տրակտորին:

— Ի՞նչ նախաձաշ,— հարցրեց վալիկոն:

— Ի՞նչ պետք ե լինի, խոտից ավելի ի՞նչ կարող  
ենք գտնել ես բաց գաշտում:

— Տրակտորը ձեր տրամած խոտն ի՞նչ պետք ե  
անի, —որից զարմանք հայտնեց վալիկոն, քանի  
վոր նա լսել եր, վոր տրակտորն անշունչ առարկա  
ին և կերի փոխարեն, վորպեսզի կարողանա աշխա-

տել, ինավիթ պիտի ունենա տաքացնող—ջերմացնող  
նյութ:

— Ինչ պետք ե անլի, կուտի, —ծաղրանքով պա-  
տասխանեցին ընկերները:

— Բայց չե վոր տրակտորը խոտ չի ուտում, —  
չեր գալարում առարկելուց վալիկոն:

— Ապա ինչ ե ուտում, յեթե խոտ չի ուտում, —  
այս ու այն կողմից բացականչեցին ընկերները, — չի  
վոր տրակտորն ել յեների տեսակին ե պատկանում  
միայն թե նա ազնիվ ցեղից ե և ավելի ուժեղ... դու  
կարծում ես տրակտորը կեր չի ուղղում...

Վալիկոն կասկածի մեջ ընկավ, բայց այսուտմե-  
նայնիվ չամողվեց, վոր տրակտորը խոտակեր ե և  
վճռականապես հայտարարեց:

— Յերթանք, և ձեր սեփական աչքերով կահսնեք,  
վոր նա խոտ ուտող չի:

— Հապա ի՞նչ ե ուտում:

Վալիկոյի լիզուն կապ ընկավ. նա վոչինչ չկարո-  
ղացավ պատասխանել, քանի վոր լավ չգիտեր, ինչո՞վ  
ե սնվում տրակտորը, վոր տրակտորը խոտակեր  
և սնվում տրակտորը, նա կատարելապես համոզված եր, բայց  
չեր գրանում նա կատարելապես համոզված եր, բայց  
վոր չկարողացավ անմիջական պատասխան  
քանի վոր չկարողացավ անմիջական պատասխան  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-  
տալ ավելի լավ համարեց լոել և ինքն ել հասակա-

վի լայնարձակ դաշտերը, ուր աշխատում եյին բավա-  
կան թվով տրակտորներ:

Տղաները մոտեցան կոլեկտիվի բակին:

Բակից նրանք լսեցին ինչ-վոր մեքենայի դրդո-  
ցի ձայն:

Քանի գնում այդ դղբդոցը սաստկանում եր և  
վարուցանքի աշխատանքից դռնդրունալով դանդաղ  
մեքենան մոտեցավ կոլեկտիվի դռանը՝ բակը մտնե-  
լու համար:

Այդ հենց տրակտոր մեքենան եր:

— Ես ինչի՞նման ե, տղերք, — սարսափած բացա-  
կանչեցին տղաները և իրար յետև կուչ յեկան:

— Տրակտորը հենց սա յե, — ինչի նմանս վհրն ե, —  
համարձակ, գլուխը բարձր և դոշ տված բացականչեց  
Վալիկոն:

— Տրակտոր, — համարյա միաբերան ու դարմա-  
ցած բացականչեցին բոլորը:

— Տրակտոր ե, ապա ինչ կարծեցիք:

Տրակտորը դանդաղ ընթացքով մոտեցավ տղանե-  
րին:

— Քեռի, միթե ճիշտ սա յե տրակտորը, — դիմե-  
ցին տղաները շոփերին և հետաքրքրությամբ սկսե-  
ցին զննել մեքենան:

— Այս ե, այո, տրակտորը, իմ փոքրիկ բարեկամ-  
ներ:

Տղաները զարմացած նայեցին իրար:

— Լավ, բայց լթրը եք կեր տալիս ձեր տրակ-  
տորին, — անհանգիստ հարցրեց Տայիան:

— Կեր, ինչ կեր:

Ախորժակով սկսեց ինդալ շոփերը, վորը հոհուցի  
փոխվեց, յերբ նկատեց տղաների ձեռքին բռնած  
փունջ-փունջ դալար խոտեր:

— Կեր առավոտներն ենք տալիս... բայց տրակ-  
տորը վոչ թե կեր ե ուտում, այլ ընդունում ե ջեր-  
մացնող նյութ և դրանով շարժվում ե... փոքրիկներ,  
հետաքրքիր և թե եղ խոտի փնջերը ինչի՞ յեք բե-  
րել:

— Տրակտորի նախաճաշի համար ենք բերել  
բայց...

Տայիան գլուխը կախեց, և ամոթից կարմրեցին  
նրա այտերը:

Շոփերն իր ծիծաղը կրկնապատկեց, ապա կանգ-  
նեցրեց տրակտորը և ոգտվելով յերեխաների հետա-  
քրքրությունից, սկսեց ուրախ տրամադրությամբ  
բացատրել տրակտորի նշանակությունը:

— Տրակտորը խոտ չի ուտում, բարեկամներս, սա-  
կայն նրան տալիս ենք միշտ բենզին և ջուր. այ-  
տեսեք...

Շոփերը բացեց յերկաթե ծածկոցը, տղաները  
շարքով կանգնեցին, շրջապատեցին նրան և ուշա-  
գործությամբ լսում եյին շոփերի բացարությունները  
դրակտորի առանձին-առանձին մասերի և նրանցից  
յուրաքանչյուրի նշանակության մասին:

Անսահման եր տղաների զարմանքը, և անշարժ,  
փայտի նման կանգնած, լարված ուշադրությամբ  
հետևում եյին բացարություններին և մանրամասն

զնուում արակտորի մասերը: Ամենից շատ զարթուցած էր ու ապուշ կտրած Տայիան, վորովհետև շատ շատ համոզված էր, վոր արակտորն անպայման խոստակեր համոզված էր, վոր արակտորն անպայման խոստակեր համոզված էր, մինչդեռ դուրս յեկավ, վոր մի անպետք և լիներ, մինչդեռ դուրս յեկավ, վոր մի անպետք և լիներ:

— Յես հո ասեմ եյի, քանի անգամ ասացի, վոր արակտորը խոս չի ուտում, հիմտ հո տեսմք, համոզվեցիք, — պարձենալով վալիկոն դիմեց ընկերներին և սկսեց ծիծաղել նրանց վրա:

— Այ, դու ել կասես, հա...

— Ի՞նչ, սուտ եմ ասեմ...

— Յեթե սուտ չի հապա ինչու դու ել մեղ հետ յեկար խոս քաղելու: Վալիկոն կարմբեց, տեսավ, վոր ինքն ել վորոշ հանցանք ունի դրանում:

— Յես յեթե յեկա ձեզ հետ և սկսեցի խոս քաղել այդ խոտը նրա համար եր, վոր... սկսեց մի շարք պատճառաբանություններ բերել վալիկոն՝ զբանուին արդարացնելու համար:

— Զուր են քո արդարացումները... Ձիշտն ին ե, վոր դու ել հաստատ չգիտելիր արակտորի ինչ մի հետ, քեզ ել հայտնի չեր, վոր նա մի անշունչ մենելը, քեզ իր ժամանակին մեզ կասելիր ու քիսա յե, թե չե իր ժամանակին մեզ կասելիր իհամոզելիր:

— Ի՞նչ եք կովում, փոքրիկ բարեկամներ, այդ հո հանցանք չի, վոր մինչև որս չեք իմացել արակտորի ինչ լինելը, հիմտ արդեն ձեր սեփական աչքե-

րով տեսաք և համոզվեցիք, թե ինչ բան է արակտորը: Սրանից հետո մնում է ձեզ, վոր դուք ել ձեր հերթին բացատրեք ու հասկացնեք ձեր մլուս չնկեր-ներին արակտորի նշանակությունը, հետաքրքրու-ներին առաջացնեք նրանց մեջ, վոր նրանք ել գան թլուն, առաջացնեք նրանց մեջ, վոր նրանք ել ձեզ նման տեսնեն կոլեկտիվի գաշտերը, նրանք ել ձեզ նման տեսնեն կոլեկտիվի գաշտերը:

Շոփերն այս բոլոր բացատրությունները տալուց հետո բաժանվեց աղաներից, բարձրացավ արակտորը, հաստեց իր տեղը և շարժման մեջ դնելով մեքենան՝ ուղղեց նորից գեղի դաշտերը — կիսատ թողած գործը շարունակելու:

Դաշտի մեջ արակտորի յետեկց ձգվեցին քանդած հողաշերտերը. իսկ տղաները ծարավի աչքերով հա- նողաշերտերը. իսկ տղաները ծարավի աչքերով հա- նողաշերտերը. իսկ տղաները ծարավի աչքերով հա- նողաշերտերը. իսկ տղաները ծարավի աչքերով հա- նողաշերտերը.



Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փոքրիկ ազրոնոմը	3
2. Վաղը փետրվարի 25-ն ե	15
3. Բեժիկոյի հայտարարությունը	43
4. Ճամբար գնալու պատրաստություններ	53
5. Վնասված պտուտակը	69
6. Աղյուսի գործարան	83
7. Տայիան	91

印光堂藏書

ՀՀ Ազգային գրադարան



NL0403043

14